ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 դեկտեմբերի 2022 թվականի N 169-Ա

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 06-ի երրորդ նստաշրջանի արտահերթ չորրորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.

3) Աբովյան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին.

4) «Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի ոռոգման համակարգի ապահովման» ծրագրին համաձայնություն տալու մասին.

5) Աբովյան համայնքի ավագանու անդամներին դրամական փոխհատուցում տրամադրելու մասին.

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին.

7) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին.

8) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 15-ի N 107-Ա որոշումը մասնակի անվավեր ճանաչելու մասին.

9) Վարազդատ Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին.

10) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Պտղնի գյուղի 12-րդ փողոցի թիվ 1/1 հասցեում գտնվող հողամասը Մեսրոպ Խալաթյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.

11) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0138-0047 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

12) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղում գտնվող 07-043-0138-0048 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

13) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի 1-ին թաղամասի և 3-րդ փողոցի միջակայքում գտնվող տարածքը 2-րդ թաղամաս անվանակոչելու մասին.

14) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 0.7886 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին.

15) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերն աճուրդային կարգով օտարելու մասին.

16) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող ավտոմեքենան աճուրդային կարգով օտարելու մասին.

17) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված

շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
18) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցի թիվ 10/6 հասցեում գտնվող հողամասը Բաբկեն Հովակիմյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
19) Աբովյանի մարզահամալիրը Վահագն Թումասյանի անվամբ անվանակոչելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 06
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 դեկտեմբերի 2022 թվականի N 170-Ա

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի «Աբովյան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին» N 4-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -23 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 06
ք. Աբովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 06-ի
N 170-Ա որոշման

«Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2021 թվականի դեկտեմբերի 29-ի
N 4-Ա որոշման

# Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

# ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ) կարգավորվում է Աբովյան համայնքի (այսուհետ՝ Համայնք) ավագանու (այսուհետ՝ Ավագանի) գործունեության կազմակերպումը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը:
2. Ավագանին Համայնքի տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, այլ օրենքներով և Կանոնակարգով նախատեսված լիազորություններ:
3. Ավագանին իր գործունեությունը կազմակերպում է Ավագանու անդամների, Ավագանու խմբակցությունների և մշտական հանձնաժողովների միջոցով:
4. Ավագանին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքին (այսուհետ՝ Օրենք), այլ օրենքներին և իրավական ակտերին, Կանոնակարգին համապատասխան իր լիազորություններն իրականացնելիս անկախ է և գործում է ի շահ Համայնքի և նրա անունից:
5. Ավագանու գործունեությունը հիմնվում է քաղաքական բազմակարծության, իրավահավասարության, օրինականության, հարցերի ազատ քննարկման ու կոլեկտիվ լուծման սկզբունքների վրա:
6. Ավագանին գործում է Օրենքին և Կանոնակարգին համապատասխան՝ նիստերի, հանձնաժողովների նիստերի, խմբակցությունների աշխատանքի միջոցով:
7. Ավագանու աշխատանքային լեզուն հայերենն է: Եթե նիստին հրավիրված անձը ելույթ է ունենում օտար լեզվով, ապա ապահովվում է դրա հայերեն թարգմանությունը:
8. Ավագանին կազմված է 27 անդամից, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով: Ավագանին կազմավորված է համարվում, եթե ընտրվել է Ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն երկու երրորդը:
9. Նորընտիր Ավագանու լիազորությունների ժամկետը սկսվում է առաջին նիստի գումարման պահից: Այդ պահից ավարտվում է նախորդ Ավագանու լիազորությունների ժամկետը:
10. Ավագանին և Համայնքի ղեկավարը գործում են իրենց նստավայրում, հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, Բարեկամության հրապարակ 1:

11. Ավագանու որոշմամբ Ավագանին իր գործունեությունը (ներառյալ՝ նիստերի անցկացումը) կարող է կազմակերպել այլ վայրում:
12. Համայնքի ղեկավարը Ավագանու նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում Ավագանու՝ Օրենքով և Կանոնակարգով նախատեսված կարգով գործունեության իրականացման համար:
13. Ավագանու նիստում կարող է քննարկվել Համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ Ավագանին ընդունում է որոշումներ: Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասություններից դուրս հարցերի առնչությամբ Ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝ ուղղված Համայնքի բնակչությանը, Համայնքի ղեկավարին, մարզպետին, պետական կամ այլ մարմինների և կազմակերպությունների:

## II. ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

14. Ավագանու խմբակցությունները ստեղծում են նորընտիր Ավագանու առաջին նստաշրջանի բացման օրը՝ հետևյալ սկզբունքին համապատասխան. Ավագանու անդամների մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի առաջադրմամբ ընտրված Ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում:
15. Խմբակցությունը Համայնքի ղեկավարին գրավոր ներկայացնում է իր կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները, որոնք նիստը վարողը հրապարակում է Ավագանու առաջիկա նիստում:
16. Ավագանու անդամը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին և Համայնքի ղեկավարին: Խմբակցության գործունեությունը դադարում է, եթե նրա բոլոր անդամները դուրս են գալիս խմբակցությունից:
17. Խմբակցության կազմի փոփոխության, ինչպես նաև գործունեության դադարման մասին գրավոր տեղեկացվում է Համայնքի ղեկավարը կամ Ավագանու նիստը վարողը, որն այդ մասին հայտարարում է Ավագանու առաջիկա նիստում:
18. Համայնքապետարանի նիստերի դահլիճում խմբակցություններին հատկացվում են առանձին հատվածներ:
19. Համայնքապետարանի նիստերի դահլիճում կամ Ավագանու որոշած այլ վայրում խմբակցություններն ապահովվում են կահավորված, տեխնիկական և կապի միջոցներով հագեցված առանձին աշխատասենյակներով:
20. Մինչև յոթ անդամ ունեցող խմբակցությունն ունենում է մեկ գործավար, յոթից ավելի անդամ ունեցող խմբակցությունը՝ մեկ գործավար և մեկ փորձագետ, որոնք աշխատանքի են ընդունվում ժամկետային պայմանագրով՝ համապատասխան խմբակցության ղեկավարի ներկայացմամբ, կատարում են նրա հանձնարարությունները, աջակցում են խմբակցության, Ավագանու անդամների աշխատանքին, ինչպես նաև Ավագանու այն մշտական հանձնաժողովի աշխատանքներին, որի նախագահ է ընտրվել տվյալ խմբակցության անդամը:

## III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

21. Ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմամբ, ստեղծում է մշտական, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովներ:

22. Հանձնաժողովները ստեղծվում են Ավագանու իրավասության մեջ մտնող հարցերի քննարկման և նախապատրաստման, որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ավագանուն եզրակացություններ տալու նպատակով:

23. Հանձնաժողովների անդամների կազմը հաստատվում է Ավագանու որոշմամբ:

24. Մշտական հանձնաժողովներն են՝

1) զարգացման ծրագրերի, ֆինանսաբյուջետային, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում է Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, տարեկան աշխատանքային պլանի, գույքի կառավարման տարեկան ծրագրի, բյուջեի, վարկերի, փոխառությունների, հարկերի, տուրքերի, վճարների, առևտրի, սպասարկման, գովազդի և այլ ֆինանսատնտեսական հարցերով).

2) քաղաքաշինության, հողօգտագործման և անշարժ գույքի հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում է ճարտարապետության, քաղաքային և գյուղական բնակավայրերի քաղաքաշինության, հողային ֆոնդի օգտագործման և պահպանման, գյուղատնտեսության, բնակարանային ֆոնդի և այլ անշարժ գույքին վերաբերվող հարցերով).

3) կրթության, մշակույթի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում է մշակույթի, կրթության, զբոսաշրջության, երիտասարդության, սպորտի, առողջապահության, բնության պահպանության, սոցիալական, մայրության և մանկության, հաշմանդամության, աշխատանքի, զբաղվածության, հասարակայնության հետ և արտաքին կապերի հարցերով).

4) բնակավայրերին, ենթակառուցվածքներին և կոմունիկացիաներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում է բնակավայրերին, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, համայնքային հիմնարկներին առնչվող, էներգետիկ, կապի և այլ հաղորդակցությունների, կոմունալ տնտեսության հարցերով).

5) իրավական հարցերի մշտական հանձնաժողով (զբաղվում է համայնքային խնդիրների համակարգային լուծման նպատակով մշակված կանոնակարգերի, կանոնադրությունների, ընթացակարգերի, կանոնների, կարգերի և այլ իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրման և քննարկման հարցերով):

25. Հանձնաժողովներից յուրաքանչյուրի անդամների թվաքանակը հավասար է Ավագանու անդամների ընդհանուր թվի շուրջ մեկ հինգերորդին: Ավագանու խմբակցության անդամները որոշում են իրենց մասնակցությունը Ավագանու մշտական հանձնաժողովներին, որի համաձայն խմբակցության ղեկավարը Համայնքի ղեկավարին է ներկայացնում հանձնաժողովներից յուրաքանչյուրում ընդգրկվելիք խմբակցության անդամների անուն-ազգանունները: Համայնքի ղեկավարը մշտական հանձնաժողովների կազմը ներկայացնում է Ավագանու հաստատմանը:

26. Համայնքի ղեկավարը և նրա առաջին տեղակալը մշտական հանձնաժողովների կազմում չեն ընդգրկվում:

27. Մշտական հանձնաժողովի աշխատանքները համակարգվում և կազմակերպվում են հանձնաժողովի կողմից ընդունված աշխատակարգի միջոցով: Հանձնաժողովի կազմից ընտրվում է հանձնաժողովի նախագահ և քարտուղար, եթե աշխատակարգով այլ բան նախատեսված չէ:

28. Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի թեկնածությունները հաստատվում են հանձնաժողովի նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

29. Հանձնաժողովի անդամի (նախագահի) լիազորությունները դադարում են, եթե՝

1) Օրենքով սահմանված կարգով դադարել են նրա՝ որպես Ավագանու անդամի լիազորությունները.

2) նա սահմանված կարգով դուրս է եկել հանձնաժողովի անդամի պաշտոնում իր թեկնածությունն առաջադրած խմբակցությունից.

3) նա տվել է հրաժարական:

30. Հանձնաժողովի անդամը (նախագահը) հրաժարականի մասին դիմումը ներկայացնում է խմբակցությանը: Խմբակցության ղեկավարն այդ մասին տեղեկացնում է Համայնքի ղեկավարին, որն էլ համապատասխան փոփոխությունը ներկայացնում է Ավագանու հաստատմանը՝ առաջիկա հերթական նիստում:

Հանձնաժողովի անդամի թափուր տեղերը համալրվում են Կանոնակարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

31. Հանձնաժողովի նախագահը՝

1) նախապատրաստում և վարում է հանձնաժողովի նիստերը.

2) գումարում է հանձնաժողովի արտահերթ նիստերը.

3) հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը.

4) քննարկվող հարցերի վերաբերյալ Ավագանու նիստին է ներկայացնում հանձնաժողովի եզրակացություններն ու առաջարկությունները.

5) ընթացք է տալիս և պատասխանում հանձնաժողովին ուղղված դիմումներին:

32. Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում Ավագանու նստավայրում: Այլ վայրում հանձնաժողովի նիստ կարող է անցկացվել հանձնաժողովի որոշմամբ:

33. Մշտական հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են հանձնաժողովի կողմից սահմանված օրերին և ժամերին՝ Ավագանու հերթական նիստի օրվան նախորդող յոթօրյա, իսկ արտահերթ նիստի օրվան նախորդող՝ երկօրյա ժամկետում:

34. Հանձնաժողովի արտահերթ նիստ կարող է գումարվել ըստ անհրաժեշտության՝ նիստը նախաձեռնողի սահմանած ժամկետում:

35. Ավագանու նիստի ընթացքում արգելվում է հանձնաժողովի նիստի գումարումը:

36. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Նիստը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նիստին ներկա տարիքով ավագ անդամը:

37. Հանձնաժողովի նիստին կարող են ներկա գտնվել Ավագանու անդամները, Համայնքի ղեկավարը, նրա տեղակալները և հանձնաժողովի կողմից հրավիրված այլ անձինք: Հանձնաժողովի որոշմամբ հրավիրված անձինք տեղեկացվում են քննարկումներից առնվազն երեք օր առաջ:

38. Հանձնաժողովի նիստն սկսվում է օրակարգի հաստատումով: Մինչև օրակարգի հաստատումն այլ հարցեր չեն քննարկվում:

39. Նիստում հարցերի քննարկման կարգը սահմանվում է հանձնաժողովի աշխատակարգով:
40. Հանձնաժողովի նիստի հարցերի քննարկման արդյունքում կազմվում են եզրակացություններ, որոնք ներկայացվում են Ավագանու նիստում և գրավոր հանձնվում են նիստը վարողին: Եզրակացությունները ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:
41. Նիստերը արձանագրվում են, արձանագրությունը ստորագրում են նախագահը և քարտուղարը:
42. Հանձնաժողովի անդամը նիստին ներկայանալու անհնարինության դեպքում այդ մասին նախապես տեղյակ է պահում հանձնաժողովի նախագահին:
43. Յուրաքանչյուր նստաշրջանի ավարտին հանձնաժողովների նախագահները համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին գրավոր տեղեկանքներ են ներկայացնում՝ նստաշրջանի ընթացքում հանձնաժողովի նիստերից հանձնաժողովի անդամների բացակայության մասին: Տեղեկանքների հիման վրա աշխատակազմի քարտուղարը ամփոփ տեղեկանք է ներկայացնում Համայնքի ղեկավարին, որը հրապարակվում է Ավագանու հաջորդ նստաշրջանի առաջին նիստում:
44. Անհրաժեշտության դեպքում Ավագանու որոշմամբ և Համայնքի ղեկավարի համաձայնությամբ կարող են ստեղծվել Ավագանու անդամներից և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներից կազմված ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց անդամներին Ավագանին առաջադրում է Ավագանու կազմից, իսկ Համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների կազմից:
45. Ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում են առանձին որոշման նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի խնդիրների, իրադարձությունների, փաստերի մասին Ավագանուն եզրակացություններ, տեղականքներ ներկայացնելու համար:
46. Ավագանին ժամանակավոր հանձնաժողով ստեղծելիս սահմանում է նրա խնդիրները, գործունեության ժամկետը և աշխատակարգը:
47. Իր գործունեության արդյունքների մասին ժամանակավոր հանձնաժողովի նախագահը սահմանված ժամկետում զեկուցում է Ավագանու նիստում:

## IV. ԱՎԱԳԱՆՈՒ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԸ ԵՎ ՆԻՍՏԵՐԸ

48. Ավագանու հերթական նստաշրջանը գումարվում է փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև հունիսի վերջին չորեքշաբթին և սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին:
49. Նստաշրջանի ընթացքում յուրաքանչյուր ամիս հրավիրվում է Ավագանու առնվազն մեկ նիստ:
50. Նիստերի օրերը որոշում է Ավագանին՝ յուրաքանչյուր նիստի ժամանակ սահմանելով հաջորդ նիստի գումարման օրը:
51. Հերթական նիստերը սկսվում են ժամը 11:00-ին և կարող են տևել մինչև ժամը 18:00-ն: Ժամը 13:00-14:00-ն հայտարարվում է ընդմիջում: Նիստի ժամանակը սպառվելու պատճառով, եթե հնարավոր չի լինում քննարկել օրակարգում ընդգրկված բոլոր հարցերը և Ավագանին իր որոշմամբ չի երկարաձգում նիստի տևողությունը,

ապա օրակարգի մնացած հարցերի քննարկումը շարունակվում է հաջորդ աշխատանքային օրը՝ նույն կետում սահմանված ժամերին:

52. Նորընտիր Ավագանու առաջին նիստն օրենքի ուժով գումարվում է Ավագանու անդամների ընտրվելու վերաբերյալ որոշման պաշտոնական հրապարակումից հետո՝ նախորդ Ավագանու լիազորությունների ժամկետի ավարտման օրը: Ավագանու ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում, եթե նախորդ ավագանու լիազորությունների ժամկետն ավարտվում է մինչև դատական ակտի պաշտոնական հրապարակումը, նորընտիր ավագանու առաջին նիստն օրենքի ուժով գումարվում է դատական ակտի պաշտոնական հրապարակումից հետո՝ երրորդ օրը: Համայնքների միավորման պարագայում նորընտիր Ավագանու առաջին նիստն օրենքի ուժով գումարվում է ավագանու անդամների ընտրվելու վերաբերյալ որոշման կամ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում՝ դատական ակտի պաշտոնական հրապարակումից հետո՝ 10-րդ օրը: Մինչև Համայնքի ղեկավարի ընտրվելը Ավագանու նիստը վարում է Ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:

53. Ավագանու նիստերը հրավիրում և վարում է Համայնքի ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Համայնքի ղեկավարի առաջին տեղակալը:

54. Ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում նիստին չի ներկայանում Համայնքի ղեկավարը կամ նրա առաջին տեղակալը, ապա նիստը վարողի չներկայանալու մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են Ավագանու նիստին ներկայացած անդամները, որից հետո նիստը վարում է Ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը: Նիստի իրավազորությունը ստուգվում է նաև նիստի ընդհատումներից ու ընդմիջումներից հետո:

55. Ավագանու որոշումները, հայտարարությունները և ուղերձները ընդունվում են նիստին ներկա Ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի:

56. Համայնքի ղեկավարի տեղակալները, բնակավայրերի վարչական ղեկավարներն իրավունք ունեն մասնակցելու Ավագանու նիստերին, արտահերթ ելույթ ունենալու, ինչպես նաև պատասխանելու հարցերին: Ավագանու նիստերին Համայնքի ղեկավարի կամ Ավագանու խմբակցությունների հրավերով կարող են մասնակցել, ելույթներ ունենալ և պատասխանել հարցերին նաև համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները, ինչպես նաև այլ անձինք:

## V. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

57. Ավագանու նիստի օրակարգի նախագիծը ձևավորվում է Համայնքի ղեկավարի, Ավագանու անդամների, բնակավայրերի վարչական ղեկավարների, խմբակցության կողմից աշխատակազմի քարտուղարին՝ նիստից առնվազն տասն օր առաջ տրամադրած գրավոր հարցերից: Հարցերի նախաձեռնողները աշխատակազմի քարտուղարին են տրամադրում որոշման նախագիծը, նախագծի ընդունման հիմնավորումը, եթե նախագծի ընդունմամբ նախատեսվում է բյուջետային ծախսեր, ապա կցվում է նաև ծախսերի նախահաշիվը, ինչպես նաև՝ փաստաթղթերի փաթեթի էլեկտրոնային տարբերակը (կրիչը):

58. Ավագանու նիստի օրակարգում ընդգրկված հարցերը պետք է նախապես քննարկվեն Ավագանու իրավասու մշտական հանձնաժողովում և նիստից առնվազն մեկ օր առաջ քննարկման արդյունքում ձևավորված կարծիքը (եզրակացությունը) տրամադրվում է աշխատակազմի քարտուղարին: Եզրակացությունը կցվում է Ավագանու նիստի օրակարգի նյութերին:
59. Համայնքի ղեկավարը՝ Ավագանու հերթական նիստից մեկ շաբաթ առաջ, իսկ արտահերթ նիստից՝ երկու օր առաջ, մշտական հանձնաժողովների կազմից նշանակում է իրավասու հանձնաժողով և այդ մասին իրազեկում հանձնաժողովի նախագահին: Իրավասու հանձնաժողովը Ավագանու այն մշտական հանձնաժողովն է, որի իրավասությանն է վերաբերում նիստի օրակարգում ընդգրկված հարցի քննարկումը:
60. Ավագանու հերթական նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ Համայնքի ղեկավարը հրապարակում է Ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Այդ տեղեկությունները փակցվում են Համայնքի ղեկավարի, Ավագանու և վարչական ղեկավարների նստավայրում, տարածվում զանգվածային լրատվության միջոցներով, տեղադրվում են Համայնքի պաշտոնական համացանցային կայքում, հրապարակային ծանուցումների www.azdarar.am կայքում:
61. Ավագանու անդամներին նիստի օրակարգում ընդգրկված նախագծերը և դրանց կից փաստաթղթերը տրամադրվում են նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ: Նույն ժամկետում նիստի օրակարգում ընդգրկված նախագծերը և դրանց կից փաստաթղթերը տեղադրվում են Համայնքի պաշտոնական կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ:
62. Ավագանու անդամները գրանցվում են որպես համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) օգտագործողներ:
63. Ավագանու նիստի օրակարգում ընդգրկված նախագծերը և դրանց կից փաստաթղթերն Ավագանու անդամներին առձեռն տրամադրվում են Ավագանու նստավայրում՝ թղթային տարբերակով, կամ փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթը Ավագանու անդամներին ուղարկվում է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) միջոցով՝ էլեկտրոնային հասցեներին:
64. Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև Համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան մեկ տոկոսը:

Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են Համայնքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայացնում են Համայնքի ղեկավարին՝ Ավագանու կողմից սահմանված կարգին համապատասխան: Համայնքի բնակիչների նախաձեռնությունը պարտադիր կարգով ներկայացվում և քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, քան Համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և ընդգրկվել օրակարգում՝ դրա հերթական (նաև առաջին) քննարկումից առնվազն վեց ամիս հետո:

## VI. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

65. Ավագանու նիստը սկսվելուց առաջ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարն անց է կացնում նիստին ներկայացած ավագանու անդամների գրանցում:

66. Գրանցումները ներառվում են նիստի արձանագրության մեջ, որտեղ նշվում է նաև նիստից Ավագանու անդամի բացակայելու պատճառը:

67. Ավագանու նիստը սկսվում է օրակարգի հաստատմամբ: Օրակարգը հաստատվում է Ավագանու որոշմամբ:

68. Ավագանու նիստի ժամանակ օրակարգում ներառված հարցերի հերթականությունը կարող է փոփոխվել Ավագանու որոշմամբ:

69. Օրակարգում ընդգրկված որոշման նախագծերը քննարկվում և քվեարկվում են առանձին-առանձին:

70. Ավագանու նիստերը հրապարակային են: Ավագանու հրապարակային նիստերը առցանց հեռարձակվում են Համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

71. Ավագանու որոշումներն ու ուղերձները կարող են հրապարակվել զանգվածային լրատվամիջոցներով կամ այլ կերպ՝ հասարակայնությանն առավել մատչելի դարձնելու նպատակով:

72. Նիստին ներկա Ավագանու անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ կարող են անցկացվել դռնփակ նիստեր և քննարկումներ:

73. Դռնփակ նիստում, բացի Ավագանու անդամներից, նիստը վարողից և արձանագրողից իրավունք ունեն ներկա գտնվել միայն Ավագանու որոշմամբ հրավիրված անձինք:

74. Նիստը վարողը՝

1) ձայն է տալիս ելույթ ունեցողներին.

2) հերթագրում է հարցեր տալու համար.

3) կազմակերպում է քվեարկության անցկացումը և դրանց արդյունքների հրապարակումը.

4) կարող է ընդմիջել ելույթները՝ նիստի բնականոն ընթացքը վերականգնելու նպատակով.

5) ապահովում է նիստի բնականոն ընթացքը և միջոցներ ձեռնարկում Ավագանու կարգազանց անդամների նկատմամբ:

75. Կարգազանց են համարվում Ավագանու այն անդամները կամ նիստին ներկա անձինք, ովքեր նիստի ընթացքում աղմկում են, թույլ տալիս վիրավորական արտահայտություններ, չեն կատարում նիստը վարողի օրինական պահանջները կամ այլ գործողություններով խաթարում նիստի բնականոն ընթացքը:

Ավագանու կարգազանց անդամի նկատմամբ նիստը վարողը ձեռնարկում է հետևյալ միջոցները.

1) զգուշացնում է՝ հրապարակելով անուն-ազգանունը.

2) անջատում է խոսափողը.

3) մեկ նիստում զրկում է հանդես գալու իրավունքից:
76. Ավագանու որոշմամբ, նիստին ներկա Ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ, օրակարգում ընդգրկված հարցը կարող է տեղափոխվել հաջորդ նիստերի քննարկմանը:
77. Որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս տվյալ նախագծի կազմողը, իսկ որպես հարակից զեկուցող՝ իրավասու հանձնաժողովի ներկայացուցիչը:
78. Եթե հարցի քննարկումն ընդմիջվել է, ապա ընդմիջման ժամկետը լրանալուց հետո քննարկումը վերսկսվում է այն փուլից, որից այն ընդմիջվել էր:
79. Հարցի քննարկման ընթացքում հատկացվում են՝
1) զեկուցման համար՝ մինչև 20 րոպե.
2) հարցերի համար՝ մինչև 5 րոպե.
3) արձագանքի համար՝ մինչև 3 րոպե.
4) ելույթների համար՝ մինչև 5 րոպե.
5) եզրափակիչ ելույթի համար՝ մինչև 10 րոպե:
80. Եթե հարցը տվողի և զեկուցողի միջև սկսվում է բանավեճ, ապա նիստը վարողը կարող է դադարեցնել հարցադրումը:
81. Ավագանու յուրաքանչյուր անդամին հնարավորություն է տրվում հարց տալու զեկուցողին:
82. Ավագանու անդամները ելույթ ունենալու կամ հարց տալու ցանկությունը հայտնում են նստած տեղից ձեռք բարձրացնելու միջոցով կամ Համայնքի ղեկավարին նախապես գրավոր իրազեկելու միջոցով:
83. Ելույթ ունեցողները կամ հարց տվողները հանդես են գալիս նիստը վարողի հայտարարությամբ:
84. Նիստը վարողը դադարեցնում է Ավագանու անդամի սահմանված ժամանակը գերազանցող ելույթը կամ հարցը՝ հատկացված ժամանակի ավարտից 1 րոպե առաջ նախազգուշացնելով այդ մասին:
85. Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են նիստին ներկա Ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով և Կանոնակարգով:
86. Նիստը վարողը քվեարկությունից առաջ կրկնում է քվեարկության դրվող նախագծերը, ճշտում է դրանց ձևակերպումները և հիշեցնում է նաև, թե ձայների ինչ քանակով կարող է ընդունվել որոշումը:
87. Քվեարկությունն իրականացվում է նիստը վարողի հայտարարությամբ:
88. Ավագանու անդամը կարող է քվեարկել միայն անձամբ՝ կողմ, դեմ կամ ձեռնպահ ձևով:
89. Քվեարկության ավարտից հետո նիստը վարողը հրապարակում է քվեարկության արդյունքները:
90. Ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած Ավագանու անդամների ազգանունները: Ավագանու որոշումը ստորագրում է նիստը վարողը:
91. Ավագանու նիստը շարունակվում է մինչև օրակարգի սպառումը:
92. Նիստը կարող է ընդհատվել Ավագանու որոշմամբ կամ Օրենքով նախատեսված դեպքերում:

93. Ավագանու նիստը համարվում է ավարտված, եթե սպառվել են օրակարգի բոլոր հարցերը:
94. Ավագանու որոշումների նախագծերը և ընդունված որոշումները հրապարակվում են Համայնքի պաշտոնական համացանցային կայքում:
95. Ավագանու հայտարարությունները և ուղերձները մեկշաբաթյա ժամկետում ստորագրում և հրապարակում է Համայնքի ղեկավարը:
96. Ավագանու նիստերն արձանագրվում են, իսկ արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված հեռավար եղանակով նիստերի հրավիրման դեպքում՝ նաև տեսաձայնագրվում:
97. Նիստերի արձանագրումը, իսկ հեռավար նիստի դեպքում՝ նաև տեսաձայնագրումն, ապահովում է աշխատակազմի քարտուղարը:
98. Ավագանու նիստերի արձանագրությունները ստորագրում են նիստը վարողը և Ավագանու նիստին մասնակցած անդամները, իսկ հեռավար նիստի դեպքում՝ Ավագանու նիստի արձանագրությունն ստորագրում է նիստը վարողը՝ արձանագրությանը կցելով նիստի տեսաձայնագրությունը, իսկ Ավագանու անդամները նիստի ընթացքում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ արտահայտած իրենց դիրքորոշումը էլեկտրոնային փոստով ներկայացնում են Համայնքի աշխատակազմին:
99. Ավագանու նիստերի արձանագրությունները մեկշաբաթյա ժամկետում տեղադրվում են Համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ:
100. Հառավար եղանակով դռնփակ նիստեր կամ քննարկումներ չեն անցկացվում:
101. Նիստերի ավարտից հետո՝ յոթ օրվա ընթացքում, այդ նիստերի արձանագրությունները վավերացվում են նիստին ներկա Ավագանու անդամների կողմից:
102. Համայնքի բնակիչները, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել Ավագանու նիստերին՝ նիստերի դահլիճում առկա պայմանների սահմաններում, և պահպանել կարգապահության կանոնները:
103. Համայնքի ղեկավարը պարտավոր է ապահովել պայմաններ բնակչության, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցության համար: Ցանկացած անհատ կամ խումբ, ով ցանկանում է դիմել Ավագանուն հերթական նիստի ժամանակ օրակարգային հարցերի վերաբերյալ, պետք է իր հարցադրումը գրավոր ներկայացնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ նախքան նիստի սկսելը: Ավագանին ինքն է որոշում նիստի ժամանակ անհատին կամ խմբին լսելու հարցը:
104. Բնակչության հարցադրումները և առաջարկությունները օրակարգային ցանկացած հարցի վերաբերյալ թույլատրվում են Ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:
105. Ավագանու հերթական նիստերի վերջում հատկացվում է 30 րոպե ժամանակ՝ քաղաքացիների կողմից Ավագանուն ուղղված ցանկացած հարցադրմանը, որը վերաբերում է Համայնքին, պատասխանելու համար:

Հարցադրումների և առաջարկությունների հեղինակը ներկայանում է՝ նշելով իր անունն ու ազգանունը: Համայնքի ղեկավարը հերթականությամբ խոսք է տրամադրում ելույթ ունենալ ցանկացողներին:
106. Բնակիչները, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչները պարտավոր են հետևել Կանոնակարգով հաստատված կարգին և զբաղեցնել իրենց համար նախատեսված տեղերը:

## VII. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԸ

107. Ավագանու արտահերթ նիստ գումարվում է Համայնքի ղեկավարի կամ Ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ: Ավագանու անդամները գրավոր դիմում են համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ համապատասխան ձևաթուղթ (համարակալված և կնքված) տրամադրելու համար: Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից ձևաթուղթը տրամադրվում է այդ մասին դիմումը ստանալուց հետո ոչ ուշ, քան երկօրյա ժամկետում: Նշված ժամկետում ձևաթուղթ չտրամադրելու դեպքում՝ այն ինքնուրույն կազմում է Ավագանու անդամը (անդամները)՝ Կանոնակարգի սույն կետի պահանջների պահպանմամբ: Ձևաթղթում նշվում են նախաձեռնողների անուն, ազգանուն, հայրանունները, նրանց ստորագրությունները, արտահերթ նիստի օրակարգը և անցկացման ժամկետը, ինչպես նաև կցվում են օրակարգային հարցերի նախագծերը: Ձևաթուղթը Համայնքի ղեկավարին ներկայացնելուց հետո փոփոխման ենթակա չէ: Եթե ձևաթուղթը ստացման պահից 48 ժամվա ընթացքում անհրաժեշտ թվով Ավագանու անդամների ստորագրություններով հանձնվում է Համայնքի ղեկավարին, ապա նա գումարում է արտահերթ նիստ՝ նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում: Ձևաթուղթը սահմանված ժամկետում Համայնքի ղեկավարին չներկայացնելու դեպքում համարվում է մարված:
108. Ավագանու արտահերթ նիստը անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում, սակայն նախաձեռնությունից ոչ շուտ, քան երեք օրից: Արտահերթ նիստեր կարող են գումարվել նաև հերթական նստաշրջաններից դուրս:
109. Արտահերթ նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերի նախագծերը և դրանց կցված փաստաթղթերը Ավագանու անդամներին, Համայնքի ղեկավարի նշանակած իրավասու հանձնաժողովին տրամադրվում են արտահերթ նիստը նախաձեռնելուց հետո ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում: Նույն ժամկետում այդ նյութերը պետք է տեղադրվեն պաշտոնական համացանցային կայքում:
110. Արտահերթ նիստն անցկացվում է հերթական նիստերի համար Կանոնակարգով սահմանված կարգով:
111. Ավագանու արտահերթ նիստերում քննարկվող հարցերի որոշման նախագծերի ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվում են հերթական նիստերի համար սահմանված համանման պահանջներ:

## VIII. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

112. Ավագանու անդամն իրավունք ունի՝
1) առաջարկություններ ներկայացնելու Ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

2) նախապատրաստելու և Ավագանու քննարկմանը ներկայացնելու հարցեր, որոշումների նախագծեր.
3) Համայնքի ղեկավարից պահանջելու և ստանալու նրա, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև բնակավայրերին վերաբերվող տեղեկատվություն.
4) կատարելու Համայնքի բնակիչների ընդունելություն, կազմակերպելու հանրային հանդիպումներ ու քննարկումներ.
5) Ավագանու և Համայնքի ղեկավարի որոշումները կամ գործողությունները բողոքարկել դատարան, եթե խախտվել են նրա՝ որպես Ավագանու անդամի իրավունքները.
6) ստանալու դրամական փոխհատուցում՝ Օրենքով սահմանված կարգով իր պարտականություններն իրականացնելու հետևանքով կատարած ծախսերի դիմաց:
7) վարչական ղեկավարից պահանջելու և ստանալու նրա գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:
113. Ավագանու անդամը պարտավոր է՝
1) իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և Համայնքի բարօրությանն ուղղված համոզմունքով.
2) մասնակցել Ավագանու նիստերին և քվեարկություններին.
3) պարբերաբար հանդիպել բնակչության հետ, նրանց տեղեկացնել Ավագանու աշխատանքների մասին.
4) մասնակցել Ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություններին.
5) սույն Կանոնակարգով սահմանված կարգով անդամակցել Ավագանու որևէ մշտական հանձնաժողովի, մասնակցել դրա նիստերին.
6) օժանդակել Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանը.
7) չմասնակցել Ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, քույր, եղբայր) շահերին.
8) անհամատեղելի պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել Համայնքի ղեկավարին.
9) ստորագրել իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերը.
10) իրականացնել Օրենքով, այլ օրենքներով և Կանոնակարգով սահմանված այլ պարտականություններ:
114. Համայնքի ղեկավարը Համայնքի բնակիչների ընդունելության, ինչպես նաև հանրային հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու համար յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ օր կահավորված սենյակ կամ դահլիճ է հատկացնում Ավագանու անդամին:
115. Աշխատակազմի քարտուղարը յուրաքանչյուր նստաշրջանը մեկ անգամ Ավագանու անդամներին տեղեկանք է տալիս նախորդ նիստերից կամ քվեարկությունից իրենց բացակայության մասին:
116. Նիստերից ու քվեարկություններից իր բացակայության պատճառի մասին Ավագանու անդամը տեղեկացնում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին: Աշխատակազմի քարտուղարը Ավագանու նիստի ժամանակ

հրապարակում է Ավագանու անդամի բացակայության պատճառը, որն արձանագրվում է:
117. Ավագանու անդամի կողմից նիստերից կամ քվեարկությունից իր բացակայության պատճառի մասին սույն Կանոնակարգով սահմանված կարգով աշխատակազմի քարտուղարին չտեղեկացնելու դեպքում՝ բացակայությունը համարվում է անհարգելի, բացառությամբ այն դեպքերի, երբ հետագայում ներկայացվում են անաշխատունակության թերթիկ կամ տեղեկանք բժշկից:
118. Աշխատակազմի քարտուղարի կողմից տարվող հաշվառման հիման վրա, Համայնքի ղեկավարը հերթական նիստի քննարկմանն է ներկայացնում Ավագանու որոշման նախագիծ՝ Ավագանու անդամի լիազորությունները դադարեցվելու մասին, որն ընդունվում է Ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է Ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից: Որոշման նախագծին կցվում է նիստերից կամ քվեարկություններից կամ հանձնաժողովի նիստերից Ավագանու անդամի բացակայության արձանագրված պատճառները: Մշտական հանձնաժողովների նախագահները նստաշրջանը մեկ անգամ աշխատակազմի քարտուղարին են ներկայացնում հանձնաժողովների նախորդ նիստերից Ավագանու անդամների բացակայությունների մասին տեղեկատվություն:
119. Ավագանու անդամն առնվազն յոթ օր առաջ գրավոր տեղեկացվում է Ավագանու նիստում իր բացակայությունների հարցի քննարկման մասին:
120. Յուրաքանչյուր Ավագանու անդամի բացակայությունների վերաբերյալ որոշման նախագիծը քննարկվում է առանձին՝ սույն Կանոնակարգով սահմանված կարգով: Քննարկումների ավարտից հետո Ավագանու անդամը և (կամ) խմբակցության անդամը, մինչև 5 րոպե տևողությամբ, կարող է ելույթ ունենալ բացակայությունների հարցի վերաբերյալ:

## IX. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ԴԱԴԱՐՈՒՄԸ

121. Ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝
1) դադարել են Ավագանու լիազորությունները.
2) նա կորցրել է Ավագանու ընտրական իրավունքը.
3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել.
4) նա Ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել.
5) նա Ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու պահից մեկ շաբաթվա ընթացքում այդ մասին գրավոր չի տեղեկացրել Համայնքի ղեկավարին.
6) նա հրաժարական է տվել:
122. Ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե նա մահացել է:
123. Կանոնակարգի 121-րդ կետով նախատեսված դեպքերում, բացառությամբ 1-ին ենթակետով նախատեսված դեպքի, համապատասխան հիմնավորող

փաստաթղթերի հիման վրա Համայնքի ղեկավարը կազմում է Ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում տարածքային ընտրական հանձնաժողով:
124. Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը անձամբ ներկայացնում է Համայնքի ղեկավարին, որն այն հրապարակում է Ավագանու առաջիկա նիստում: Ավագանու անդամի կողմից իր դիմումն անձամբ Համայնքի ղեկավարին ներկայացնելու անհնարինության դեպքում հրաժարականի դիմումը ներկայացնում է խմբակցության ղեկավարը կամ Ավագանու անդամի ներկայացուցիչը:
125. Մանդատից հրաժարված կամ ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած Ավագանու անդամի մանդատը տարածքային ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ՝ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո մեկ շաբաթյա ժամկետում տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի հերթական հաջորդող թեկնածուին՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգով: Եթե վերջինս հրաժարվում է մանդատից, ապա նա հանվում է թեկնածուների ցուցակից: Եթե ցուցակում այլ թեկնածու չկա, ապա այդ մանդատը մնում է թափուր:

## X. ԱՎԱԳԱՆՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

126. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է վաղաժամկետ դադարեցնել Ավագանու լիազորությունները, եթե՝
1) հերթական նստաշրջանի ընթացքում Ավագանու նիստերը երեք ամսից ավելի չեն գումարվում.
2) հերթական նստաշրջանի ընթացքում Ավագանին երեք ամսից ավելի իր քննարկած հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում.
3) Ավագանին հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում Համայնքի ղեկավարի ներկայացրած արտահերթ քննարկման ենթակա նախագծի վերաբերյալ որոշում չի կայացնում:
127. Հայաստանի Հանրապետության կառավարությունը վաղաժամկետ դադարեցնում է Ավագանու լիազորությունները, եթե «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ կամ 142.3-րդ հոդվածով սահմանված կարգով նիստը գումարելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Համայնքի ղեկավար չի ընտրվում:
128. Ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշման հետ միաժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նշանակում է Ավագանու արտահերթ ընտրություններ:
129. Ավագանին շարունակում է իր լիազորությունների իրականացումը մինչև նորընտիր Ավագանու առաջին նիստը:
130. Ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Ավագանին իրավունք չունի նշանակելու տեղական հանրաքվե, անվստահություն հայտնելու Համայնքի ղեկավարին, ընդունելու կամ փոփոխելու Համայնքի

սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու տարեկան ծրագիրը:
131. Ավագանու արտահերթ ընտրությունն անցկացվում է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված ժամկետներում: Արտահերթ ընտրությունից հետո նորընտիր Ավագանու նիստը հրավիրվում է ընտրության արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ 10-րդ օրը, իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում՝ դատական ակտի հրապարակման օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

## XI. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՈՒՄԸ

132. Համայնքի ղեկավարն իր լիազորությունները ստանձնում է իր ընտրվելուց հետո՝ երրորդ օրացույցային օրը, Ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում Համայնքի բնակիչներին տրված հետևյալ երդմամբ.
«Ստանձնելով Աբովյան համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.
Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի Ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:
Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:
133. Նիստին կարող են ներկա գտնվել Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաներ, հրավիրվել պետական, հասարակական, մշակութային, կրոնական կազմակերպությունների գործիչներ, պատվավոր հյուրեր:
134. Նիստը վարող Ավագանու ավագ անդամը նիստը հայտարարում է բացված և ամբիոնի մոտ է հրավիրում ընտրված Համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարն ընթերցում է երդման տեքստը և ստորագրում դրա տակ, որին հաջորդում է Հայաստանի Հանրապետության օրհներգը: Համայնքի ղեկավարը հանդես է գալիս ելույթով: Ելույթից հետո նիստը նախագահողը Ավագանու նիստի նախագահությունը փոխանցում է Համայնքի ղեկավարին: Պաշտոնապես իր պարտականությունները ստանձնած Համայնքի ղեկավարին ողջույնի խոսքն են ուղղում հրավիրված պաշտոնատար անձինք և պատվավոր այլ հյուրեր: Դրանով Ավագանու նիստը համարվում է ավարտված:

## XII. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼԸ

135. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու որոշման նախագիծ կարող է ներկայացնել Ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը: Որոշման նախագիծը ներառում է Ավագանու այն անդամի անուն-ազգանունը, որին նախաձեռնող խումբն առաջադրում է որպես Համայնքի ղեկավարի թեկնածու, ինչպես նաև այն պետք է ստորագրեն նախաձեռնող խմբի բոլոր անդամները:

136. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծը հանձնվում է Համայնքի ղեկավարին, ինչպես նաև Ավագանու խմբակցություններին: Ավագանու խմբակցություններն այդ մասին անհապաղ տեղեկացնում են իրենց խմբակցությունների անդամներին:
137. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը ներկայացվելուց հետո՝ 36 ժամվա ընթացքում, նախաձեռնող խմբի մեջ չմտնող Ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը կարող է ևս ներկայացնել Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծ՝ առաջադրելով Համայնքի ղեկավարի այլ թեկնածու:
138. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը ներկայացնելուց հետո՝ երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 10:00-ին, օրենքի ուժով հրավիրվում է Ավագանու նիստ, որում գաղտնի քվեարկությամբ որոշվում է Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու հարցը:
139. Քվեարկությունն անցկացվում է գաղտնի՝ քվեաթերթիկների միջոցով, որոնցում ընդգրկվում է Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագծով առաջադրված թեկնածուն, իսկ եթե այդպիսի նախագծերը մեկից ավելի են, ապա համապատասխան քանակով թեկնածուները: Ավագանու յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:
140. Համայնքի ղեկավարին անվստահություն է հայտնվում, եթե առաջադրված թեկնածուն (թեկնածուներից մեկը) ստանում է Ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:
141. Գործող Համայնքի ղեկավարը Օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքում վայր է դնում իր լիազորությունները, իսկ նորընտիր Համայնքի ղեկավարն իր լիազորություններն ստանձնում է մեկշաբաթյա ժամկետում:
142. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացնելու նախաձեռնություն կարող է ցուցաբերվել Համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց և անվստահության հարցը քննարկելուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո:
143. Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու առաջարկություն չի կարող ներկայացվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

## XIII. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

144. Համայնքի բյուջեն Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, տարեկան աշխատանքային պլանի և Համայնքին՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը:
145. Յուրաքանչյուր տարի Համայնքի բյուջեն հաստատում է Ավագանին: Ավագանին Համայնքի բյուջեում փոփոխություններ է կատարում Համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատում է Ավագանին:
146. Համայնքի բյուջեն բաղկացած է վարչական և ֆոնդային մասերից: Համայնքի բյուջեն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

147. Համայնքի ղեկավարը բյուջեի նախագիծը Ավագանու քննարկմանն է ներկայացնում կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում: Բյուջեի նախագիծն Ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ: Եթե պետական բյուջեն ընդունելիս ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերը փոփոխվում են, ապա Համայնքի ղեկավարը երկշաբաթյա ժամկետում Ավագանու հաստատմանն է ներկայացնում բյուջեի համապատասխան փոփոխությունները:

148. Համայնքի ղեկավարը Ավագանուն ներկայացնում է բյուջեի նախագիծը, պատասխանում է Ավագանու անդամների հարցերին:

149. Ավագանու անդամները և խմբակցությունները բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք քննարկվում են Ավագանու նիստում: Եթե Ավագանու անդամի առաջարկությունը նախատեսում է նոր ծախսեր, ապա նա պարտավոր է նշել համապատասխան ֆինանսական միջոցների աղբյուրները: Համայնքի ղեկավարը քննարկումներից հետո կարող է վերցնել մինչև մեկ շաբաթ ժամանակ՝ ներկայացված նախագծի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար:

150. Նշված ժամկետում Համայնքի ղեկավարը հրավիրում է Ավագանու նիստ և ներկայացնում է իր դիրքորոշումը բյուջեի՝ Ավագանու առաջարկած փոփոխությունների վերաբերյալ: Բյուջեի նախագիծը Համայնքի ղեկավարի ընդունած փոփոխություններով քվեարկության է դրվում ամբողջությամբ: Չընդունվելու դեպքում նոր բյուջեի նախագծի քննարկման ժամկետները կարող է որոշել Ավագանին՝ համաձայնեցնելով Համայնքի ղեկավարի հետ, կամ Համայնքի ղեկավարը՝ հրավիրելով արտահերթ նիստ:

151. Եթե Ավագանին մինչև տարվա սկիզբը բյուջեն չի ընդունում, ապա ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: Այդ դեպքում Համայնքի ղեկավարը պարտավոր է կատարել նախկինում կնքած պայմանագրերից բխող պարտավորությունները, չիրականացնել նոր ներդրումներ, իսկ ծախսերը կատարել նախորդ տարվա յուրաքանչյուր ամսում կատարված ծախսերից ոչ ավելի:

152. Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա տասնհինգը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդում է ներկայացնում Ավագանուն:

153. Համայնքի ղեկավարը բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն Ավագանուն է ներկայացնում մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի մեկը՝ նախնական քննարկումներ անցկացնելու համար:

154. Ավագանու նիստում բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը քննարկվում և ընդունվում է բյուջեի նախագծի քննարկման և ընդունման համար սահմանված կարգով՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի քսանը:

155. Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման հետ կապված՝ Օրենքով և Կանոնակարգով չկարգավորված հարցերը կանոնակարգվում են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով:

156. Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով Համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը: Համայնքի ղեկավարը մշակում է Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և իր լիազորություններն ստանձնելու օրվանից հետո՝ չորս ամսվա ընթացքում, ներկայացնում Ավագանու հաստատմանը:

Նոր ձևավորված Համայնքի դեպքում, Համայնքի ղեկավարը մշակում է Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և ներկայացնում Ավագանու հաստատմանը իր լիազորություններն ստանձնելու օրվանից հետո՝ հինգ ամսվա ընթացքում:

157. Ավագանին քննարկում է ներկայացված ծրագիրը, անհրաժեշտության դեպքում դրա մեջ կատարում փոփոխություններ կամ լրացումներ և ընդունում է այն նիստին ներկա Ավագանու անդամների ձայների կեսից ավելիով: Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի գործողության ժամկետի ընթացքում Ավագանու անդամների ընտրություն կայանալու դեպքում Ավագանու լիազորություններն ստանձնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող են առաջարկվել հնգամյա զարգացման ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են առաջարկվել Համայնքի ղեկավարի կամ Ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կամ մշտական հանձնաժողովների կողմից՝ հաշվետու տարում Համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը Համայնքի ղեկավարի ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

158. Համայնքի ղեկավարը մինչև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի կամ տարեկան բյուջեի նախագծերը Ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասը: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ Համայնքի ղեկավարը Ավագանուն տրամադրում է տեղեկատվություն:

159. Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և տարեկան բյուջեն հրապարակվում են: Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և բյուջեն համայնքի բնակչության համար առավել մատչելի դարձնելու համար պատրաստվում և հրատարակվում են հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուներ ու գրքույկներ:

## XIV. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ (ԶՐԿԵԼՈՒ) ԿԱՐԳԸ

160. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչումը պատվավոր կոչում է, որը նախատեսված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:
161. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանը արժանանում են այն քաղաքացիները, որոնք իրենց երկարամյա անբասիր աշխատանքով կամ բացառիկ մեծ վաստակով նպաստել են Համայնքի բարգավաճմանը, ակնառու ներդրում ունեն համայնքի տնտեսական, մշակութային զարգացման գործում, բացառիկ ավանդ ունեն մշակույթի, արվեստի, գրականության կամ գիտության զարգացման բնագավառում՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, գույքային կամ այլ դրությունից:
162. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (զրկելու) առաջարկը Ավագանու հաստատմանն է ներկայացնում Համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարին նման առաջարկով կարող են դիմել Ավագանու անդամները, հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, մշակութային, գիտական, կրթական կազմակերպությունները:
163. Առաջարկ ներկայացնողը պարտավոր է հիմնավորել այն, համակողմանիորեն լուսաբանել Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանը ներկայացվող քաղաքացու կյանքը, գործունեությունը, ներկայացնել համապատասխան նյութեր և քաղաքացու լուսանկարը:
164. Ստացված առաջարկությունները քննարկում է Ավագանին, և նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ որոշում է կայացնում Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:
165. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանն արժանացած անձանց տրվում է վկայական:
166. Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու (զրկելու) մասին Ավագանու որոշումը հրապարակվում է, հնարավորության դեպքում լուսաբանվում է տեղական զանգվածային լրատվության միջոցներով:

## XV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

167. Սույն Կանոնակարգն ուժը կորցրած կարող է ճանաչվել ՀՀ օրենսդրության և Ավագանու որոշման հիման վրա:
168. Կանոնակարգում ցանկացած փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել Ավագանու որոշմամբ՝ չհակասելով ՀՀ Սահմանադրությանը, Օրենքին և այլ իրավական ակտերին:
169. Կանոնակարգի փոփոխությունն ընդունվում է Ավագանու նիստին ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությամբ:
170. Սույն Կանոնակարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

06 դեկտեմբերի 2022 թվականի N 171-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-ին հոդվածի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն N 1- N 8 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -23 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 06
ք. Աբովյան

Հավելված 1
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 06-ի
N 171 - Ա որոշման

# Աբովյան համայնքի բյուջեի եկամուտների կանխատեսումների առանձնահատկությունները

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում օրենսդրությամբ սահմանվել է համայնքում իրականացվող ռազմավարական ծրագրավորման երեք փուլ, որոնք տարբերվում են միմյանցից ինչպես դրանց ծրագրավորման ժամանակային հորիզոնով, այնպես էլ յուրաքանչյուր փուլում ծրագրավորվող տարրերի ագրեգացման մակարդակով: Այսպես, կախված ծրագրավորման ժամանակային հորիզոնից՝ նախատեսվում է հնգամյա ժամանակահատվածի (երկարաժամկետ), եռամյա ժամանակահատվածի (միջնաժամկետ) և մեկ տարվա ժամանակահատվածի (կարճաժամկետ) ծրագրերի մշակում: Երկարաժամկետ ծրագրերում ծրագրային տարրերը ներկայացվում են ագրեգացման առավել բարձր մակարդակով, քան միջնաժամկետ ծրագրերում, իսկ միջնաժամկետ ծրագրերում դրանց մակարդակն ավելի բարձր է, քան կարճաժամկետ ծրագրերում:

Վերը նշված ծրագրավորման երեք փուլերը փոխկապակցված են, և յուրաքանչյուր փուլում կազմված և սահմանված կարգով հաստատված ծրագիրը հիմք է հանդիսանում հաջորդ փուլում կազմվելիք ծրագրի համար: Մասնավորապես, երկարաժամկետ ծրագիրը հիմք է հանդիսանում միջնաժամկետ ծրագրի մշակման համար, իսկ միջնաժամկետ ծրագիրը իր հերթին հիմք է հանդիսանում կարճաժամկետ ծրագրի մշակման համար:

Համայնքի երկարաժամկետ ծրագիրը՝ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրն է, միջնաժամկետ ծրագիրը՝ երեք տարվա համար կազմվող համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է, իսկ կարճաժամկետ ծրագիրը՝ մեկ տարվա համար կազմվող համայնքի բյուջեն է: Եթե համայնքի զարգացման ծրագիրը հաստատվում է մեկ անգամ ավագանու լիազորությունների ամբողջ ժամանակահատվածի՝ 5 տարվա համար (անհրաժեշտության դեպքում կարող են լինել փոփոխություններ), ապա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը մշակվում և հաստատվում է յուրաքանչյուր տարի՝ առաջիկա 3 տարվա համար:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի

հիմնախնդիրների արդյունավետ լուծում: Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքը, որը հնարավորություն է տալու առավել իրատեսական, առարկայական դարձնել համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը՝ առաջիկա երեք տարվա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է (ՄԺԾԾ): Այն հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն ընձեռնելով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար: Այսինքն՝ համայնքի տարեկան բյուջեի նախագծի կազմման գործընթացն առաջնորդվելու է արդեն իսկ կազմված համայնքի ՄԺԾԾ-ով՝ առաջիկա տարվա համար հաստատված հաշվարկներով և հիմնավորումներով: Եվ հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ համայնքի ՄԺԾԾ նախագծի մշակումը նույնպես, ինչպես և տարեկան բյուջեի նախագծի մշակումը, համայնքի բյուջետային գործընթացի լիիրավ փուլ է համարվում: Համայնքի եռամյա միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման փուլի ներմուծմամբ համայնքի համար հնարավորություն է ընձեռնվում անցնել եռամյա ֆինանսական ծրագրավորմանը և տեսնել համայնքի բյուջեի մշակման փուլին բնորոշ մեկ տարվա տեսադաշտից ավելի հեռու՝ երեք տարվա հորիզոնով: Այդ ժամանակահատվածում համայնքի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության, ինչպես նաև այլ գործոնների ազդեցության կանխատեսումները հնարավորություն կընձեռնեն համայնքին մի կողմից՝ մեծացնել համայնքի ֆինանսական ծրագրերի կանխատեսելիությունը, ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմների հստակեցումը, իսկ մյուս կողմից՝ բարձրացնել համայնքներում բյուջետային կարգապահությունը և հաշվետվողականությունը: Առաջիկա երեք տարվա՝ տեղական ինքնակառավարման մարմինների ՄԺԾԾ մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքների համար կառավարելու ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան:

## Աբովյան համայնքի բյուջեի ՄԺԾԾ ոլորտային գերակայությունները

Գերակայությունները որոշվում են ինչպես համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի գերակայությունների, այնպես էլ յուրաքանչյուր տարվա համայնքի բյուջեով: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրերի առաջնահերթ ուղղությունները և հաշվի առնելով համայնքի խնդիրները, համայնքը իր առջև դրել է հետևյալ գերակայությունները՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշգրտելով անշարժ գույքի հարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները:

- Բարձրացնել ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների և բնակիչների հետ աշխատանքի արդյունավետությունը:
- Իրականացնել համայնքի ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման գործունեության արդյունավետ կազմակերպում՝ համադրելով ֆինանսական ծրագրերի (հանրային հատվածի հաշվապահություն, ՀՀ ՖՆ գանձապետարանի ծրագիր) և ամփոփ հաշվեկշիռների հրապարակայնություն ՀԿՏՀ-ում:
- Բարձրացնել բնակչությանը և տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող համայնքային ծառայությունների և այլ լրացուցիչ ծառայությունների մակարդակն ու որակը:
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:
- Աջակցություն ցուցաբերել և իրականացնել միջոցառումներ համայնքի բնակչության՝ խոցելի խմբերին, բազմազավակ ընտանիքներին, հաշմանդամներին ֆինանսական կամ նյութական օգնություն տրամադրելու գործում:
- Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային, կոմունալ տնտեսության բարեկարգման, ճանապարհային տնտեսության բնագավառներում, ավելացնել փողոցային լուսավորությունը, առկա լուսավորության համակարգը փոխարինելով էներգախնայող լուսատուներով:
- Խթանել համայնքում գենդերային, հաշմանդամության և խոցելի խմբերի համար ծրագրերի իրականացումը:
- Իրականացնել օրենքով համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ՝ պաշտպանության և արտակարգ իրավիճակների պայմաններում գործողություններ իրականացնելու ոլորտում:

Համայնքի զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական մակարդակի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքում հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև համայնքում գենդերային հավասարությանը:

Համայնքը կարևորում է համայնքային ենթակայության մշակույթի և սպորտի բնագավառների՝ մշակույթի տների, գրադարանների, երաժշտական դպրոցների աշխա-տողների աշխատավարձերի բարձրացումը, շարունակվում են համայնքային ենթակայության հուշարձանների վերականգնման և պահպանման աշխատանքները: Համայնքային կառավարման ոլորտում իրականացվում են համայնքային ծառայության կատարելագործման, տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև համայնքային ծառայողների անձնակազմի կարողությունների զարգացումը: Տնտեսության ոլորտում շարունակվում են ներդրումները ճանապարհային տրանսպորտի, առևտրի և տնտեսական զարգացման, քաղաքաշինության, անշարժ

գույքի կադաստրի, գյուղատնտեսության և ջրային տնտեսության, էներգետիկայի և բնապահպանության ոլորտներում (համապատասխան ծրագրերի առկայության պայմաններում):

Բնապահպանության բնագավառում կարևորվում են աղբահանության և սանիտարական մաքրման, այդ թվում՝ անօրինական աղբանոցների վերացման, ինչպես նաև թափոնների կառավարման գործընթացների և միջոցառումների ու են- թածրագրերի, տարածքների կանաչապատման, բնապահպանական այլ միջոցառումների իրականացումը:

Տրանսպորտի և կապի բնագավառում իրականացվելիք ծախսային քաղաքականության հիմնական գերակայություններն են ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգումը և լուսավորությունը:

Տնտեսական զարգացման բնագավառի հիմնական գերակա ուղղությունն է գյուղատնտեսության, տեղական զբոսաշրջության զարգացման, արևային էներգիայով աշխատող օբյեկտների կառուցման միջոցառումների իրականացումը:

Քաղաքաշինության բնագավառի հիմնական ուղղություններն ու ծախսային գերակա- յություններն են՝ համայնքների բարեկարգման, բազմաբնակարան շենքերի սպասարկման, վթարային շենքերի ամրացման կամ նոր շենքերի կառուցման, անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի, համայնքում ապօրինի շինությունների քանդմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ծախսերը և դրանց գծով հաշվարկները ներկայացնելիս առաջնորդվել ենք Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2008 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության համայնքի բյուջեի օրինակելի ձևը և նշված ձևի առանձին հատվածների լրացման մասին ցուցումները հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2004 թվականի մարտի 5-ի N 194-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 730 հրամանով: Ծախսերը տնտեսագիտական դասակարգմամբ հաշվարկել ենք «Դաս-Կատեգորիա-Խումբ» սինթետիկ մակարդակով: Ծախսերի նախագծում համայնքի ղեկավարի, նրա աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրության չափերը որոշելիս համայնքի ղեկավարը ղեկավարվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 28-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների և ծառայու- թյունների ձեռքբերման (գնման) հոդվածներով ծախսերի նախատեսման դեպքում այդ

ծախսերի հաշվարկներում ապրանքների և ծառայությունների գները հաշվարկելիս առաջնորդվել ենք հետևյալ մոտեցմամբ՝

- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար առկա են նախորդ տարիներից շարունակվող (գործող) պայմանագրեր, որոնք տարածվում են ընթացիկ տարվա վրա, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով համապատասխան պայմանագրերով սահմանված գներից,
- այն դեպքում, երբ տվյալ հոդվածի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար գները սահմանվում են համապատասխան կարգավորող մարմինների կողմից, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով սահմանված սակագներից,
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար առկա չեն ընթացիկ տարվա վրա տարածվող պայմանագրեր, սակայն առկա են համապատասխան (գործող) պայմանագրեր նախորդ տարվա համար, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով նախորդ տարվա համապատասխան պայմանագրերով սահմանված գներից,
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար չկան գործող պայմանագրեր, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով ընթացիկ տարվան նախորդող տարվա համապատասխան փաստացի գներից,
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար գործող պայմանագրերի, սահմանված սակագների և ընթացիկ տարվան նախորդող տարվա համապատասխան փաստացի գների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով վերջինիս վերաբերյալ ՀՀ պաշտոնական վիճակագրության կամ այլ աղբյուրների հրապարակումներում առկա տեղեկատվությունից:

**Համայնքների եկամուտները՝**

2023-2025 թվականների Աբովյան համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրում առաջիկա երեք տարիների համար համայնքի եկամուտները պլանավորելիս հիմք է հանդիսացել օրենքով սահմանված և նախորդ երեք տարիներին հավաքագրված միջին ցուցանիշները:

Հարկերը հաշվարկելիս հիմք է հանդիսացել համայնքում պարտադիր կիրառվող անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով: Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի՝ անշարժ գույքի հարկի և

փոխադրամիջոցների գույքահարկի գումարները ենթակա են վճարման համայնքի բյուջեն: Անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցների գույքահարկ վճարողների, դրանց առանձին խմբերի, ինչպես նաև հարկման որոշ օբյեկտների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված են հարկային արտոնություններ: Անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի արտոնությունների սահմանման իրավասությամբ օժտված է նաև համայնքի ավագանին, որի սահմանած արտոնությունների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել տվյալ հարկային տարվա համար անշարժ գույքի հարկի գծով համայնքի բյուջեի հաստատված եկամուտների 10 տոկոսը և փոխադրամիջոցների գույքահարկի համար համայնքի բյուջեի հաստատված եկամուտների 10 տոկոսը, և այդ արտոնությունների գումարի դիմաց պետական բյուջեից լրացուցիչ դոտացիաներ չեն տրամադրվում:Աբովյան համայնքում արտոնություն է կիրառվել Արցախյան քառօրյա պատերազմի ժամանակ հանձնված տարածքներում մնացած ավտոմեքենաների համար: Միևնույն ժամանակ համայնքների բյուջեների նախագծերում տեղական հարկերի մուտքերի կանխատեսման ժամանակ անհրաժեշտ է հիմք ընդունել յուրաքանչյուր հարկատեսակի համար հաշվարկային գումարները, գնահատել պլանավորվող տարվա սկզբի դրությամբ կուտակվելիք ապառքների փոփոխության (մարման և/կամ նոր ապառքների առաջացման) դինամիկան և հարկային օրենսդրության հնարավոր խախտումների համար հաշվարկվելիք տույժերի և տուգանքների գծով համայնքի բյուջե գանձվելիք գումարների ծավալները (այսինքն՝ գնահատել նշված հարկատեսակների գծով համայնքի բյուջեի եկամուտների պոտենցիալ մակարդակը): Մասնավորապես, ապառքների մարման կամ նոր ապառքների առաջացման վերաբերյալ ենթադրությունները, որոնք կդրվեն այս հարկատեսակների գծով համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսումների հիմքում, ար-տացոլվում է նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2004 թվականի մարտի 5-ի N 194-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2008 թվականի օգոստոսի 15-ի N 730-Ն հրամանով հաստատված համայնքի բյուջեի (նրա բաղկացուցիչ մասերի) միասնական օրինակելի ձևի հատված 1-ի «Տեղեկություններ գույքահարկի և հողի հարկի, հողերի և այլ գույքի վարձակալության վարձավճարների գծով առանձին ցուցանիշների վերաբերյալ» աղյուսակի 1-3 տողերում: Իրատեսական կանխատեսումների համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև նախորդ տարիներին այդ հարկերի գանձելիության մակարդակը, ինչպես նաև այս բնագավառում առկա խնդիրների առաջացման պատճառները ու դրանք հաղթահարելու հնարավորությունները: Անշարժ գույքի հարկի կանխատեսումներում անհրաժեշտ է հաշվի առնել, որ անշարժ գույքի հարկով հարկման բազա են համարվում անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանող օրենքով սահմանված կարգով գնա-հատված՝ հողամասերի և (կամ) դրանց բարելավումների շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքները: Բացի այդ, նույն հարկային օրենսգրքով

սահմանվել է, որ 2021 թվականի, հաշվետու տարվա համար անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և ՀՀ հարկային օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 25 տոկոսի չափով, 2022 թվականի համար՝ 30 տոկոսի չափով, 2023 թվականի հաշվետու տարվա համար՝ 35 տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ 50 տոկոսի չափով, 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ 75 տոկոսի չափով և 2026 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար՝ 100 տոկոսի չափով:

Փոխադրամիջոցների գույքահարկի կանխատեսումներում հաշվի ենք առել փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտները՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, ջրային փոխադրամիջոցը (շարժիչով աշխատող), մոտոցիկլետը, ձյունագնացը, մոտոամենագնացը (քվադրոցիկլը):

**Պետական տուրքեր**

Աբովյան համայնքի բյուջե են մուտքագրվում օրենքով ամրագրված հետևյալ պետական տուրքերից մուտքերը.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխությունների, լրացումների, ուղղումների և վերականգնման վկայականներ տալու համար պետական տուրքերը,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար պետական տուրքերը:

**Տեղական տուրքեր և վճարներ՝**

Տեղական տուրքերի գծով համայնքի բյուջեի եկամուտների հաշվարկման համար կարևոր է բազայի գնահատումը, քանի որ տեղական տուրքերը և դրանց դրույքաչափերը սահմանվում են համայնքի տարեկան բյուջեի հաստատումից առաջ: Դրույքաչափերի հաստատումից հետո տեղական տուրքերի կանխատեսումը կհանգի միայն տարվա ընթացքում տվյալ տեղական տուրքի քանակի (բազայի) կանխատեսմանը: Նույն մոտեցմամբ իրականացվում է նաև տեղական վճարներից համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսումը: Աբովյան համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելիս ավագանին առաջնորդվել է գոտիավորման սկզբունքով, գոտի համարելով համայնքի կազմում առկա յուրաքանչյուր բնակավայրը:

**Այլ եկամուտներ՝**

Աբովյան համայնքի այլ եկամուտներն են համայնքի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից քաղաքացիաիրավական պայմանագրերի համապատասխան գանձվող վճարները՝ համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները, որոնց հաշվարկման ժամանակ անհրաժեշտ է հիմք ընդունել նախորդ տարիների համար կնքված պայմանագրերի ցուցանիշները: Վարձակալության հանձնվող հողերի վարձակալական վճարները չպետք է պակաս լինեն այդ հողերի համար հաշվարկվող անշարժ գույքի հարկի մեծությունից, իսկ այս եկամտատեսակի գծով կանխատեսվող գումարները պետք է ներառեն նաև առ 01.01.13թ. առկա ապառքների մարումից մուտքերը: Այլ եկամուտ է նաև վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները:

**Պաշտոնական դրամաշնորհներ**

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքին համապատասխան համայնքների բյուջեների վարչական մասի եկամուտների կազմում կարող են նախատեսվել պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհները: Դրանցից մի տեսակի՝ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարները կհաշվարկվեն լիազորված պետական մարմնի կողմից՝ «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքներին համապատասխան:

Համայնքի բյուջեի նախագիծ կազմելիս՝ հիմքում դրվում է համայնքի ՄԺԾԾ-ն՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա:

Առաջիկա երեք տարվա՝ համայնքի ՄԺԾԾ մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները:

Հավելված N 2
Աբովյան համայնքի ավագանու 2022
թվականի դեկտեմբերի 06- ի
N 171 - Ա որոշման

# ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի 2023-2025թթ. վարչական և ֆոնդային մասերի եկամուտները՝ ըստ ձևավորման աղբյուրների

(հազար դրամ)

| տող N | Եկամտատեսակները | Հոդվածի NN | 2021 փաստացի | | | 2022 հաստատված | | | 2023 թվական | | | 2023թ կանխատեսված և 2022թ հաստատված բյուջեի | | | 2024 թվական | | | 2025 թվական | | | Շտկումներ 2023թ կանխատեսված և 2022թ հաստատված ռոտծի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | |
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդայի ն բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | 3694142,5 | 3179153,6 | 574053,1 | 3150000,0 | 3150000,0 | 0,0 | 3810000,0 | 3310000,0 | 500000,0 | 660000,0 | 160000,0 | 500000,0 | 3655942,2 | 3155942,2 | 500000,0 | 3534096,5 | 3034096,5 | 500000,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 +տող1140+ տող 1150 ), այդ թվում՝ | 7100 | 951810,2 | 951810,2 | 0,0 | 937401,5 | 937401,5 | 0,0 | 995475,4 | 995475,4 | 0,0 | 58073,9 | 58073,9 | 0,0 | 1006530,0 | 1006530,0 | 0,0 | 1035815,4 | 1035815,4 | 0,0 | Հիմք՝ ՀՀ Հարկային օրենսգիրք: Կանխատեսումների ժամանակ հաշվի են առնվել բազաների ճշտումները, նախորդ տարիների հարկերի գանձելիության մակարդակը, ապառքները և գերավճարները: Անշարժ գույքի հարկի դրական տարբերությունը պայմանավորված է հարկի գումարի տոկոսային ավելացումով |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112+տող1113), այդ թվում՝ | 7131 | 304658,3 | 304658,3 | 0,0 | 302600,5 | 302600,5 | 0,0 | 304285,4 | 304285,4 | 0,0 | 1684,9 | 1684,9 | 0,0 | 310000,0 | 310000,0 | 0,0 | 324285,4 | 324285,4 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | | 94745,3 | 94745,3 | | 88900,0 | 88900,0 | | 79285,4 | 79285,4 | | -9614,6 | -9614,6 | 0,0 | 80000,0 | 80000,0 | | 79285,4 | 79285,4 | | |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 33140,6 | 33140,6 | | 34300,5 | 34300,5 | | 35000,0 | 35000,0 | | 699,5 | 699,5 | 0,0 | 30000,0 | 30000,0 | | 35000,0 | 35000,0 | | |
| 1113 | Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ | | 176772,4 | 176772,4 | | 179400,0 | 179400,0 | | 190000,0 | 190000,0 | | 10600,0 | 10600,0 | 0,0 | 200000,0 | 200000,0 | | 210000,0 | 210000,0 | | |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 7136 | 522759,7 | 522759,7 | 0,0 | 506461,0 | 506461,0 | 0,0 | 539660,0 | 539660,0 | 0,0 | 33199,0 | 33199,0 | 0,0 | 545000,0 | 545000,0 | 0,0 | 560000,0 | 560000,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 522759,7 | 522759,7 | | 506461,0 | 506461,0 | | 539660,0 | 539660,0 | | 33199,0 | 33199,0 | 0,0 | 545000,0 | 545000,0 | | 560000,0 | 560000,0 | | |
| 1130 | 1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310 + տող 11311+տող 11312+ տող 11313 + տող 11314+տող 11315+ տող 11316 + տող 11317+ տող 11318 + տող 11319), այդ թվում՝ | 7145 | 73922,3 | 73922,3 | 0,0 | 77340,0 | 77340,0 | 0,0 | 98530,0 | 98530,0 | 0,0 | 21190,0 | 21190,0 | 0,0 | 98530,0 | 98530,0 | 0,0 | 98530,0 | 98530,0 | 0,0 | «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք: Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի բազայի դրույքաչափը և գնահատում |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1130 | Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության [illegible] թույլտվության համար | | 27529,0 | 27529,0 | | 28250,0 | 28250,0 | | 28250,0 | 28250,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 28250,0 | 28250,0 | | 28250,0 | 28250,0 | | |
| 1130 | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներ կատարելու թույլտվության համար | | 0,0 | 0,0 | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1130 | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | | 82,5 | 82,5 | | 75,0 | 75,0 | | 75,0 | 75,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 75,0 | 75,0 | | 75,0 | 75,0 | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1130 | Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնք-ի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և հանրապետ. նշանակ. ավտոճանապ. ճանապարհ-ի կողերում, խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ. գազ-ի | | 2527,5 | 2527,5 | | 2550,0 | 2550,0 | | 6600,0 | 6600,0 | | 4050,0 | 4050,0 | 0,0 | 6600,0 | 6600,0 | | 6600,0 | 6600,0 | | |
| 1130 | Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող ճանապարհին առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների | | 1495,0 | 1495,0 | | 1750,0 | 1750,0 | | 2355,0 | 2355,0 | | 605,0 | 605,0 | 0,0 | 2355,0 | 2355,0 | | 2355,0 | 2355,0 | | |
| 1130 | Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար | | 512,5 | 512,5 | | 500,0 | 500,0 | | 2500,0 | 2500,0 | | 2000,0 | 2000,0 | 0,0 | 2500,0 | 2500,0 | | 2500,0 | 2500,0 | | |
| 1130 | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար | | 18089,9 | 18089,9 | | 18700,0 | 18700,0 | | 19000,0 | 19000,0 | | 300,0 | 300,0 | 0,0 | 19000,0 | 19000,0 | | 19000,0 | 19000,0 | | |
| 1130 | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի | | 2414,8 | 2414,8 | | 2415,0 | 2415,0 | | 3200,0 | 3200,0 | | 785,0 | 785,0 | 0,0 | 3200,0 | 3200,0 | | 3200,0 | 3200,0 | | |
| 1130 | Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո | | 1340,3 | 1340,3 | | 1500,0 | 1500,0 | | 1375,0 | 1375,0 | | -125,0 | -125,0 | 0,0 | 1375,0 | 1375,0 | | 1375,0 | 1375,0 | | |
| 1131 | Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար | | 2917,6 | 2917,6 | | 3100,0 | 3100,0 | | 4000,0 | 4000,0 | | 900,0 | 900,0 | 0,0 | 4000,0 | 4000,0 | | 4000,0 | 4000,0 | | |
| 1131 | Քաղաքային բնակավայրերում անասունների պահման, սահմանված կարգին համապատասխան, տնային կենդանիներ պահելու թույլտվության համար | | 0,0 | 0,0 | | 0,0 | | | 0,0 | 0,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | 0,0 | 0,0 | | |
| 1131 | Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համ. համայնքի վարչ. տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվ. համար, բացառ. միջպետ. ու հանրապետ. նշանակ. ավտոճանապ. ճանապարհ-ի օտարման շերտերում և պաշտպ. գոտի-ում տեղադր. գովազդ-ի թույլտվ-ի (բացառ | | 13549,8 | 13549,8 | | 15000,0 | 15000,0 | | 27825,0 | 27825,0 | | 12825,0 | 12825,0 | 0,0 | 27825,0 | 27825,0 | | 27825,0 | 27825,0 | | |
| 1131 | Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվ. | | 425,0 | 425,0 | | 400,0 | 400,0 | | 600,0 | 600,0 | | 200,0 | 200,0 | 0,0 | 600,0 | 600,0 | | 600,0 | 600,0 | | |
| 1131 | Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների միկրոավտոբուսների) ծառայության | | 471,0 | 471,0 | | 500,0 | 500,0 | | 150,0 | 150,0 | | -350,0 | -350,0 | 0,0 | 150,0 | 150,0 | | 150,0 | 150,0 | | |
| 1131 | Համայնքի վարչական տարածքում քաղաքաշինական հողհատկացման (հրամանագրի) ծխախոտառությամբ ծառայությունների իրականացման և (կամ) | | 375,0 | 375,0 | | 2500,0 | 2500,0 | | 2500,0 | 2500,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 2500,0 | 2500,0 | | 2500,0 | 2500,0 | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1131 | Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար | | 0,0 | 0,0 | | 0,0 | | | 0,0 | 0,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | 0,0 | 0,0 | | |
| 1131 | Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար | | 65,0 | 65,0 | | 100,0 | 100,0 | | 100,0 | 100,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 100,0 | 100,0 | | 100,0 | 100,0 | | |
| 1131 | Այլ տեղական տուրքեր | | 2127,3 | 2127,3 | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1140 | 1.4 Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1141 + տող 1142), այդ թվում՝ | 7146 | 50469,9 | 50469,9 | 0,0 | 51000,0 | 51000,0 | 0,0 | 53000,0 | 53000,0 | 0,0 | 2000,0 | 2000,0 | 0,0 | 53000,0 | 53000,0 | 0,0 | 53000,0 | 53000,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1141 | Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար | | 11885,4 | 11885,4 | | 12000,0 | 12000,0 | | 12000,0 | 12000,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 12000,0 | 12000,0 | | 12000,0 | 12000,0 | | «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը, նախորդ տարիների փաստացի մուտքերի հավաքագրման ցուցանիշներ |
| 1142 | Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար | | 38584,5 | 38584,5 | | 39000,0 | 39000,0 | | 41000,0 | 41000,0 | | 2000,0 | 2000,0 | 0,0 | 41000,0 | 41000,0 | | 41000,0 | 41000,0 | | |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում՝ | 7300 | 2066162,9 | 1551174,0 | 514988,9 | 1582135,5 | 1582135,5 | 0,0 | 2074921,6 | 1574921,6 | 500000,0 | 492786,1 | -7213,9 | 500000,0 | 1918109,2 | 1418109,2 | 500000,0 | 1776978,1 | 1276978,1 | 500000,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1230 | 2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից | 7321 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1231 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1240 | 2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից | 7322 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1241 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1252 + տող 1255 + տող 1256) որից՝ | 7331 | 1551174,0 | 1551174,0 | 0,0 | 1582135,5 | 1582135,5 | 0,0 | 2074921,6 | 1574921,6 | 500000,0 | 492786,1 | -7213,9 | 500000,0 | 1918109,2 | 1418109,2 | 500000,0 | 1776978,1 | 1276978,1 | 500000,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1251 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | 1544435,6 | 1544435,6 | | 1575337,5 | 1575337,5 | | 1568123,6 | 1568123,6 | | -7213,9 | -7213,9 | 0,0 | 1411311,2 | 1411311,2 | | 1270180,1 | 1270180,1 | | ՀՀ համայնքների բյուջեներին ,,Ֆինանսական համահարթեցման մասին,, ՀՀ օրենքով դոտացիաներ տրամադրելու նպատակով ,,ՀՀ 2023թվականի պետական բյուջեի մասին,,ՀՀ օրենքով նախատեսված հատկացումներ |
| ### | պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ,այդ թվում՝ | | 306,0 | 306,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| ### | Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցման գումարներ | | 306,0 | 306,0 | | | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1255 | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 6432,4 | 6432,4 | | 6798,0 | 6798,0 | | 506798,0 | 6798,0 | 500000,0 | 500000,0 | 0,0 | 500000,0 | 506798,0 | 6798,0 | 500000,0 | 506798,0 | 6798,0 | 500000,0 | |
| 1260 | 2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262), այդ թվում՝ | 7332 | 514988,9 | 0,0 | 514988,9 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1261 | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 514988,9 | | 514988,9 | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում՝ | 7400 | 676169,4 | 676169,4 | 59064,2 | 630463,0 | 630463,0 | 0,0 | 739603,0 | 739603,0 | 0,0 | 109140,0 | 109140,0 | 0,0 | 731303,0 | 731303,0 | 0,0 | 721303,0 | 721303,0 | 0,0 | «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք, «Տեղական տուրքերի և վճարների մասին» |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1320 | 3.2 Շահաբաժիններ, այդ թվում՝ | 7412 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1321 | Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (շահաբաժիններ) | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334), այդ թվում՝ | 7415 | 53390,6 | 53390,6 | 0,0 | 53300,0 | 53300,0 | 0,0 | 53300,0 | 53300,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 55000,0 | 55000,0 | 0,0 | 55000,0 | 55000,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ | | 36887,6 | 36887,6 | | 37300,0 | 37300,0 | | 37300,0 | 37300,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 35000,0 | 35000,0 | | 30000,0 | 30000,0 | | |
| ### | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | 370,5 | 370,5 | | | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1333 | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | 16132,5 | 16132,5 | | 16000,0 | 16000,0 | | 16000,0 | 16000,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 20000,0 | 20000,0 | | 25000,0 | 25000,0 | | |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342+ տող 1343), այդ թվում՝ | 7421 | 10257,4 | 10257,4 | 0,0 | 3618,0 | 3618,0 | 0,0 | 3618,0 | 3618,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 3618,0 | 3618,0 | 0,0 | 3618,0 | 3618,0 | 0,0 | |
| | այդ թվում՝ | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | | 0,0 | | | |
| | | | | - Սուբսիդիաներ ոչ ֆինանսական | 4511 | 119800,0 | 119800,0 | | 122000,0 | 122000,0 | | 122000,0 | 122000,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 122000,0 | 122000,0 | 0,0 | 122000,0 | 122000,0 | 0,0 | |
| | | | | *3.Արթիկի շախմատի դպրոց ՈՒՏՊՈԱԿ* | | 26450,5 | *26450,5* | *0,0* | 26000,0 | *26000,0* | *0,0* | 30000,0 | *30000,0* | *0,0* | 4000,0 | 4000,0 | 0,0 | 30000,0 | 30000,0 | 0,0 | 30000,0 | 30000,0 | 0,0 | |
| | | | | - Սուբսիդիաներ ոչ ֆինանսական | 4511 | 26450,5 | 26450,5 | | 26000,0 | 26000,0 | | 30000,0 | 30000,0 | | 4000,0 | 4000,0 | 0,0 | 30000,0 | 30000,0 | 0,0 | 30000,0 | 30000,0 | 0,0 | |
| | | | | *4.Գագիկ Ծառուկյանի անվան Արթիկի սպորտի և մշակույթի համալիր կենտրոն ՀՈԱԿ* | | 85500,0 | *85500,0* | *0,0* | 79000,0 | *79000,0* | *0,0* | 170000,0 | *170000,0* | *0,0* | 91000,0 | 91000,0 | 0,0 | 170000,0 | 170000,0 | 0,0 | 170000,0 | 170000,0 | 0,0 | |
| | | | | - Սուբսիդիաներ ոչ ֆինանսական | 4511 | 85500,0 | 85500,0 | | 79000,0 | 79000,0 | | 170000,0 | 170000,0 | | 91000,0 | 91000,0 | 0,0 | 170000,0 | 170000,0 | 0,0 | 170000,0 | 170000,0 | 0,0 | |
| | | | | *5.Արթիկի երեխաների աջակցության կենտրոն* | | 28500,0 | *28500,0* | *0,0* | 27000,0 | *27000,0* | *0,0* | 27000,0 | *27000,0* | *0,0* | 0,0 | 0,0 | 0,0 | 27000,0 | 27000,0 | 0,0 | 27000,0 | 27000,0 | 0,0 | |
| | | | | - Սուբսիդիաներ ոչ ֆինանսական | 4511 | 25500,0 | 25500,0 | | 27000,0 | 27000,0 | | 27000,0 | 27000,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 27000,0 | 27000,0 | 0,0 | 27000,0 | 27000,0 | 0,0 | |
| | | | | Այլ կապիտալ դրամաշնորհների | 4657 | 3000,0 | 3000,0 | 0,0 | | | | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | | | | 6.[illegible] | | 0,0 | 0,0 | 0,0 | 5000,0 | 0,0 | 5000,0 | 0,0 | 0,0 | 0,0 | -5000,0 | 0,0 | -5000,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | | | | - Վարչական սարքավորումներ | 5122 | | | | 5000,0 | | 5000,0 | | | | -5000,0 | 0,0 | -5000,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| 3000 | 10 | 0 | 0 | *ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ* | | 24538,7 | *24538,7* | *0,0* | 9000,0 | *9000,0* | *0,0* | 7000,0 | *7000,0* | *0,0* | -2000,0 | -2000,0 | 0,0 | 7000,0 | 7000,0 | 0,0 | 7000,0 | 7000,0 | 0,0 | |
| | | | | այդ թվում` | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| 3030 | 10 | 3 | 0 | *Հարազատին կորցրած անձինք* | | 240,0 | 240,0 | | | | | | 0,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| 3031 | 10 | 3 | 1 | Հարազատին կորցրած անձինք | | 240,0 | 240,0 | | | | | | 0,0 | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | | | | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 240,0 | 240,0 | | | | | | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| 3070 | 10 | 7 | 0 | *Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)* | | 24298,7 | *24298,7* | *0,0* | 9000,0 | *9000,0* | *0,0* | 7000,0 | *7000,0* | *0,0* | -2000,0 | -2000,0 | 0,0 | 7000,0 | 7000,0 | 0,0 | 7000,0 | 7000,0 | 0,0 | |
| | | | | որից` | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին | | 24298,7 | 24298,7 | 0,0 | 9000,0 | 9000,0 | 0,0 | 7000,0 | 7000,0 | 0,0 | -2000,0 | -2000,0 | 0,0 | 7000,0 | 7000,0 | 0,0 | 7000,0 | 7000,0 | 0,0 | |
| | | | | այդ թվում` | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | | | | *1. Սոցիալական օգնություններ* | | 24298,7 | *24298,7* | *0,0* | 9000,0 | *9000,0* | *0,0* | 7000,0 | *7000,0* | *0,0* | -2000,0 | -2000,0 | 0,0 | 7000,0 | 7000,0 | 0,0 | 7000,0 | 7000,0 | 0,0 | |
| | | | | [illegible] նպաստներ | 4726 | 1240,0 | 1240,0 | | 9000,0 | 9000,0 | | 0,0 | | | -9000,0 | -9000,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | | | | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 23058,7 | 23058,7 | | | | | | 7000,0 | | 0,0 | 7000,0 | 0,0 | 0,0 | 7000,0 | 0,0 | 0,0 | 7000,0 | 0,0 | |
| 3100 | 11 | 0 | 0 | *ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎԱԾ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ* | | 0,0 | *59064,2* | *0,0* | 161000,0 | *161000,0* | *0,0* | 170000,0 | *170000,0* | *0,0* | 9000,0 | 9000,0 | 0,0 | 170000,0 | 170000,0 | 0,0 | 170000,0 | 170000,0 | 0,0 | |
| | | | | այդ թվում` | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ* | | 0,0 | *59064,2* | *0,0* | 161000,0 | *161000,0* | *0,0* | 170000,0 | *170000,0* | *0,0* | 9000,0 | 9000,0 | 0,0 | 170000,0 | 170000,0 | 0,0 | 170000,0 | 170000,0 | 0,0 | |
| | | | | որից` | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | | 0,0 | 59064,2 | 0,0 | 161000,0 | 161000,0 | 0,0 | 170000,0 | 170000,0 | 0,0 | 9000,0 | 9000,0 | 0,0 | 170000,0 | 170000,0 | 0,0 | 170000,0 | 170000,0 | 0,0 | |
| | | | | այդ թվում` | | 0,0 | | | | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |
| | | | | - Պահուստային միջոցներ | 4891 | 0,0 | 59064,2 | | 161000,0 | 161000,0 | | 170000,0 | 170000,0 | | 9000,0 | 9000,0 | 0,0 | 170000,0 | 170000,0 | 0,0 | 170000,0 | 170000,0 | 0,0 | |
| | | | | -Համայնքի պահուստային ֆոնդից ֆինանսական ... | x | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 դեկտեմբերի 2022 թվականի N 172-Ա

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի 2023 թվականի բյուջեում հատկացնել 10 000 000 (տաս միլիոն) դրամ գումար՝ 2023 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են բոլոր ոլորտներն ու բնակավայրերը:
3. Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն համայնքի բնակիչները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (հասարակական կազմակերպություններ, արհեստակցական միություններ, մասնագիտական ասոցիացիաներ, մեդիա խմբեր, հիմնադրամներ և քաղաքացիների այլ խմբեր):
4. Համայնքի ղեկավարին՝
1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում, 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրում.
2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանու հավանությանը.
3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -23 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 06

Ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 դեկտեմբերի 2022 թվականի N 173-Ա

## «ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄՈՒՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ» ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Տալ համաձայնություն «Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի ոռոգման համակարգի ապահովման» ծրագրին՝ Աբովյան համայնքի կողմից մինչև 20 % համաֆինանսավորմամբ:
2. Աբովյան համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով հետևել ծրագրի իրականացման աշխատանքներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -23 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 06
գ. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 դեկտեմբերի 2022 թվականի   N 174-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Աբովյան համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին» N 02-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -22    Դեմ -0    Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵԴԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԲԱԲԱՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ

ԲԱԴԱԼՅԱՆ ԱՏՈՄ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ

ԳԵՂԱՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԶԱՐՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԹԵՆԵՔԵՋՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՂՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՍՊՈՒՐԱԿ

ՑՈՒԳՈՒՆՅԱՆ ՊԱՎԵԼ

ՔՈՍԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՍԻՊՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 06
ք. Արովյան

Հավելված
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի 06-ի N 174-Ա որոշման

# ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն) սահմանվում են համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

## II. ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

Հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անունը կրող քաղաքը հիմնադրվել է 1963 թվականին: Աբովյան քաղաքը գտնվում է Երևանից դեպի հյուսիս՝ 16 կմ հեռավորության վրա, ծովի մակարդակից 1450 մ /միջին նիշ/ և 36 կմ հեռավորությամբ մարզկենտրոն Հրազդան քաղաքից, Հրազդան և Ազատ գետերի հովիտների միջև, Կոտայքի ընդարձակ սարահարթում: Համայնքի հյուսիս-արևելյան մասում բարձրանում է Գեղամա լեռնաշղթան, հյուսիսում՝ Հատիս լեռն ու Գութանասարն են, արևմուտքում ձգվում է Հրազդանի կիրճը, իսկ հարավում՝ Նորքի բարձունքը:

Աբովյան քաղաքի տարածքը գտնվում է 1438-1491 մ բացարձակ նիշերի սահմաններում:

Կլիմայական տեսակետից ուսումնասիրվող տարածքը մտնում է չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով բնորոշվող գոտու մեջ:

Հողի սառեցման խորությունը՝ 80սմ է: Ձյան ծածկույթի միջին բարձրությունը՝ 25 սմ: Ձյունե ծածկույթի կշիռը՝ 700 ն/մ$^2$:

Աբովյան քաղաքի վարչական տարածքում է գտնվում մ.թ.ա. կառուցված հանրահայտ «Դարանի» ամրոց-բնակատեղին և հնագույն պատմություն ունեցող «Դարանի» գյուղը (նախկին Էլար): Աբովյան քաղաքի հատակագծային կառուցվածքը ներդաշնակ է տարածքի ռելիեֆին: Հասարակական կենտրոնը

զբաղեցնում է հարթ ստորոտը, որին ամֆիթատրոնի ձևով հարավից, արևելքից և հյուսիսարևելքից շրջապատում են մեղմ թեքությամբ լանջերը և դրանց վրա տարածվող բլրակներն ու հարթակները: Լանջերի թեք հատվածները նախատեսված են կանաչապատ գոտիների համար, իսկ հարթակներով սփռվում են միկրոշրջանները: Դրանք ի սկզբանե նախատեսված էին բնակելի բազմաբնակարան շենքերի կառուցապատման համար: Ներկայումս 1-4-րդ միկրոշրջանները հիմնականում կառուցապատված են 4-5-9 հարկանի ու 12-16 հարկանի բազմաբնակարան շենքերով, դպրոցներով, մանկապարտեզներով, սպասարկման, առևտրի ու ինժեներական ենթակառուցվածքների տարբեր կառույցներով: 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ միկրոշրջանների կառուցապատումը 90-ական թվականների ընթացքում իրականացվեց տնամերձ հողամասերով՝ սակավահարկ առանձնատներով: Հարավային մասը զբաղեցնում է հին գյուղական կառուցապատումը, իսկ ավելի հարավ՝ Աբովյանի հարավային արդյունաբերական հանգույցը:

Աբովյան քաղաքում հիմնական կառուցապատումը սկսվել է 1960-ական թվականներին՝ 4-5 հարկայնությամբ տիպային շենքերով, որոնք կառուցվել են կրող պատերի սկզբունքով, ինչով և պայմանավորված է դրանցում պատուհանների և բացվածքների փոքր չափերը: Հիմնական շինանյութ է հանդիսացել տուֆը և բազալտը:

1970-ական թվականներին սկսվել է միաձույլ երկաթբետոնե (այսուհետ՝ ե/բ) կրող կոնստրուկցիաններով տիպային բազմաբնակարան շենքերի շինարարությունը: Միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաններով կառուցման եղանակը հնարավորություն է ստեղծել իրականացնելու ավելի մեծ պատուհանների բացվածքներ:

Քաղաքի տարածքում կառուցապատման ժամանակ օգտագործվել են հայկական դասական, մոդեռն և այլ ճարտարապետական ոճեր:

***Քաղաքի տարածքում գտնվող շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի, կրկնվող և հաճախ կիրառվող տարրերի լուսանկարները:***

***4-5 հարկանի տիպային շենքեր տուֆից***



Ե/բ փիպային բազմաբնակարան շենքեր



Հասարակական նշանակության բետոնե շինություն երեսպատված տուֆով



## III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Աբովյան քաղաքի տարածքում գտնվող Էլար գյուղը Հայաստանի հինավուրց բնակավայրերից է, մարդն այստեղ բնակություն է հաստատել քարե դարից սկսած: Ստեփանոս Օրբելյանի տեղեկության համաձայն, Իվանե Աթաբեկը Էլարը շնորհել է Լիպարիտ Օրբելյանին որպես կալվածք /13-րդ դ./: 19-րդ դ. վերջին Էլարը 25-30 տնից բաղկացած գյուղ էր և պահակակետ սահմանի վրա: 19-րդ դարի 60-ական թթ. Մեսրոպ Սմբատյանը առաջին անգամ հրապարակեց Էլարում գտնված Արգիշտի Ա-ի ուրարտական սեպագիր արձանագրությունը, որտեղ խոսվում էր Ողուանի երկիր՝ Դուրանի /Էլարի նախաուրարտական շրջանի անունը/ քաղաքի նվաճման մասին: Վաղ բրոնզեդարյան հինգ բնակատեղիների, ամրոցի և դամբարանադաշտի պեղումներից ի հայտ են եկել բրոնզե դարի երեք փուլերի աշխատանքի գործիքներ, սև փայլեցրած խեցեղեն, գունազարդ խեցեղեն, զենքեր, պերճանքի առարկաններ, որոնք վկայում են Էլարի սերտ կապերի մասին Անդրկովկասի ու Մերձավոր Արևելքի մշակութային կենտրոնների հետ:

Աբովյան քաղաքի պատմամշակութային ժառանգությունը ներկայացված է ստորև բերված ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման պետական ցանկում:

| հ/հ | Անվանումը | ժամանակը | դիրքը | Նշանը | վիճակը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ամրոց «Դարանի» | Ք.ա. 3-1 հազ | Էլար թաղ. | Հ | |
| 1.1 | Միջնաբերդ | Ք.ա. 3-1 հազ | Էլար թաղ. | Հ | |
| 1.2 | Դամբարանադաշտ | Ք.ա. 3-1 հազ | Միջնաբերդից ամ | Հ | |
| 1.3 | Դամբարանադաշտ | Ք.ա. 3-1 հազ | Ավազահանքի մոտ | Հ | ավերված |
| 2 | 2-րդ աշխարհամարտի ռազմագերիների գերեզմանոց | 20-րդ դ. կես | Գազի նախկին գրասենյակի ու «Դարանի» հանրախանութի մոտ | Հ | |
| 3 | եկեղեցի Սբ. Ստեփանոս | 1851թ. | Էլար թաղ. | Հ | |
| 3.1 | Զանգակատուն | 19-րդ դ. | Կից եկեղեցուն հվ-ից | Տ | |
| 3.1.1 | Խաչքար | 12-13-րդ դդ | Ագուցված հվ պատի մեջ | Հ | |
| 3.1.2 | Տապանաքար | 1612թ. | Ագուցված հվ պատի մեջ | Տ | արձանագիր |
| 3.1.3 | Տապանաքար | 16-17-րդ դ. | Ագուցված հվ պատի մեջ | Տ | |
| 3.2 | գերեզմանոց | 15-20-րդ դդ. | եկեղեցու շուրջը | Տ | |
| 3.2.1 | Խաչքար | 16-17-րդ դդ | Եկեղեցու բակում | Հ | |
| 3.2.2 | կոթող | 5-6-րդ | Եկեղեցու | Հ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պարսպի վրա կանգնեցված | | |
| 3.2.3 | Տապանաքար | 1689թ. | | Տ | արձանագիր |
| 4 | Կոթող «Կապույտ խաչ» | | Քաղաքի կենտրոնում, թիվ շենք բակում եկեղեցուց 2 կմ հս | Հ | |
| 5 | Հուշահամալիր Հայաստանը Ռուսաստանին միացման 150 ամյակի | 1978 | Քաղաքի կենտրոնում | Հ | |
| 6.1 | Հայ և ռուս ժող. բարեկամության թանգարան | 1978 | Քաղաքի կենտրոնում | Հ | |
| 6.2 | Հուշարձան Խաչատուր Աբովյանին | 1978 | Քաղաքի կենտրոնում | Հ | |
| 7 | հուշաղբյուր | 1974թ. | Էլար թաղամասում | Հ | |
| 8 | Հուշարձան ԵԱՉ | 1977թ. | Էլար թաղամասում | Հ | 2-րդ աշխարհամարտի զոհերի |
| 9 | Հուշարձան ԵԱՉ | | Էլար թաղամասում | Հ | |
| 10 | Հուշարձան Տրդատ Գ արքայի | 1976թ. | Սարալանջ թաղամաս | Հ | |

***Սբ. Ստեփանոս եկեղեցի***



Սբ. Ստեփանոս եկեղեցին կառուցվել է 1851թ. քաղաքի հարավային եզրին՝ Էլար թաղամասում: Եռանավ, խորանի երկու կողմերում ավանդատներով, մուտքը հարավից, փայտաշեն ծածկով եկեղեցի է: Եկեղեցին կառուցված է տեղական տուֆից, անկյունաքարերը, լուսամուտների շրջանակները, մուտքի շրջանակը սրբատաշ տուֆով, խուլ պատերը շարված են ճեղքված կիսամշակված քարով, խառն շարվածքով և կրաշաղախով: Զանգակատան պատերի մեջ ագուցված 12-17-րդ դարերի տապանաքարեր և խաչքար: Տապանաքարերից մեկը արձանագիր է 1612թ.: Եկեղեցու շուրջ տարածվում է գերեզմանոց՝ 15-20-րդ դարեր: Ակնառու է 5-6-րդ դարերի կոթողը:

***Կոթող «Կապույտ խաչ»***



Այն գտնվում է Աբովյան քաղաքի կենտրոնում: Կերտված է անտաշ կապտավուն բազալտից: Ունի 2.1 մետր բարձրություն, մշակված է միայն հարավային երեսը, որի վրա քանդակված են ուղղահայաց դասավորված երեք հիմնախաչեր: Կարելի է թվագրել 17-րդ դարում: Այստեղ է տեղափոխվել Սբ. Ստեփանոս եկեղեցու բակից:

Հուշահամալիր Հայաստանը Ռուսաստանին միացման 150 ամյակի - 1978թ.





**Հուշարձան Խաչատուր Աբովյանին - 1978թ**



Քաղաքի վարչական կենտրոնում գտնվող հուշահամալիրը /ճարտարապետ՝ Ս. Բարխուդարյան/ զբաղեցնում է 3 հա տարածք: Գլխավոր ճակատը դիրքորոշված է դեպի Ռոսիա փողոցը: Համալիրի 1-ին պլանում՝ երկաստիճան կարմիր գրանիտե հարթակին, ուղղանկյուն գրանիտե պատվանդանին տեղադրված է հայ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի պղնձաձույլ կիսանդրին/քանդակագործ Ս. Բաղդասարյան/:

2-րդ պլանում հզոր պատվանդանին կանգնեցված են ռուս զինվորի և հայ կամավորականի՝ ութ մետր բարձրությամբ արձանները: Զինվորների գլխավերևում խաչաձևած սուրն ու հրացանը պսակված են հավերժությունն իմաստավորող դափնե ճյուղերով:

Հուշարձան Տրդատ Գ արքայի - 1976



Տրդատ Գ արքայի հուշարձանը գտնվում է Սարալանջ թաղամասում, տեղադրվել է 1976 թվականին /քանդակագործ Կ. Նուրիջանյան/: Բնական անմշակ որձաքարերով կառուցված արհեստական բլրակի վրա տեղադրված է 5.0x4.0x1.0 մետր չափերով հարթակ-պատվանդանը, որի վրա ամրացված է ամեհի ցուլի դեմ գոտեմարտող Տրդատ արքայի պղնձաձույլ արձանը:

***Հայ և ռուս ժող. բարեկամության թանգարան - 1978թ.***



*Հուշարձան Երկրորդ աշխարհամարտի զոհերի - 1977թ.*



**Ձագավանք**



Առինջ գյուղում, բլրի լանջին է գտնվում Ջագավանքը կամ Գետարգելի Սբ. Նշան վանքը, որը հիմնադրվել է վաղ միջնադարում: Վանքի հնագույն եկեղեցին VII դ. եռախորան, փոքր խաչաձև գմբեթավոր կառույցներից է: Պահպանվել են սրբատաշ տուֆից շինված պատերի ստորին շարքերը: Եկեղեցուն հյուսիսից և հարավից կից են նրա հետ միաժամանակ կառուցված և ընդհանուր գետնախարիսխ ունեցող մատուռներ: 855թ.-ին Ջագավանքի սարկավագ Զաքարիան ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս (Զաքարիա Ա Ձագեցի): Ջագավանքում 1270թ.-ին գումարվել է Ջագավանի եկեղեցական ժողովը: Վանքը նշանավոր կրոնական կենտրոն և հայտնի ուխտատեղի է դարձել, երբ 1293թ.-ին Գրիգոր Է Անավարզեցին վանքին նվիրել է Գետարգելիս Նշանը՝ Հռոմի Սեղբեստրոս պատրիարքի՝ Սբ. Գրիգոր Լուսավորչին տված Քրիստոսի խաչափայտի մասունքը, որով, ըստ ավանդության, Պետրոս Ա Գետադարձը 1022թ.-ին, Բյուզանդիայի կայսր Վասիլ II-ի ներկայությամբ, Տրապիզոնում Ջրօրհնեքի տոնին քաղաքի միջով անցնող գետը կանգնեցրել է (այստեղից էլ՝ Գետադարձ և Գետարգել անունները): Ջագավանքում 1293թ.-ին, Սբ. Նշանը պահելու համար, կառուցել են երկհարկանի գմբեթավոր եկեղեցի, որը վերականգնվել և վերանորոգվել է վերջին տարիներին: XIVդ. սկզբին վանքում գործել է Թադևոս Բոկիկ Ձորավանեցի վարդապետը: XV դ. Գեղարդավանքից Ջագավանք է տեղափոխվել Սիմեոն Րաբունապետը, որը բարեկարգել է վանքը: 1425թ.-ին վանքում Ստեփանոս գրիչն ընդօրինակել է Հակոբ Ղրիմեցու «Մեկնություն տոմարի» երկը, ապա՝ Սարգիս Ջագավանեցի վարդապետի (1441թ.-ին մասնակցել է Հայոց կաթողիկոսությունը Էջմիածնում վերահաստատել ու արարողությանը) վանահայրության ժամանակ՝ «Քերականություն և բառգիրք»-ը:

Ջագավանքն ավերվել է 1679թ.-ի երկրաշարժից, մնալով, սակայն, մինչև XX դ.՝ որպես գործող վանք, ունենալով բազմաթիվ կալվածքներ, ջրաղացներ, Երևանում՝ այգիներ:

Գետարգելի Սբ. Նշանը (ոսկե խաչը) այժմ գտնվում է Էջմիածնում, և մյուռոնօրհնության ժամանակ կաթողիկոսը առաջինը նրանով է օրհնում Սբ. Մյուռոնը: Գետարգելի Սբ. Նշանի տոնը կատարվում է գարնանը՝ Սբ. Զատկի հաջորդ կիրակին:





## Սուրբ Հովհաննես եկեղեցի



Գտնվում է Առինջ գյուղի հին մասի կենտրոնում ծովի մակերևույթից 1305 մ բարձրության վրա: Դեռևս միջնադարից Առինջն ունեցել է իր եկեղեցին: Սակայն գրավոր աղբյուրներում նշվում է 1839 թվականը, երբ առաջին անգամ գյուղում Սբ. Աստվածածին անվամբ ծխական եկեղեցի է հիշվում. «...եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնի»: Նույն անվամբ եկեղեցին հիշվում է նաև 1842 թվականին: Շուրջ երեք տասնամյակ անց եկեղեցու շենքն արդեն հասցրել էր այն աստիճան քայքայվել, որ 1879 թվականին առինջեցիները որոշում են հնի տեղում բոլորովին նոր եկեղեցի կառուցել (վկայված է Սբ. Հովհաննես անվամբ): Ծրագիրն իրականացնելու համար ձևավորվում է հոգաբարձություն, որի անդամները Բաղդասար Հարությունյանը, Պապի Սահակյանը, Հակոբ Փիլիպոսյանը, Ղուկաս Այդինյանը և Թադեոս Գևորգյանը, 1879 թվականի սեպտեմբերի 22-ին նոր եկեղեցի կառուցելու համար պայմանագիր են կնքում երևանաբնակ վարպետ Մելքոն Դավթյանի հետ: Վարպետը պարտավորվում է հնի հիմքերի վրա կառուցել սրբատաշ քարից մի նոր եկեղեցի՝ սկսած պայմանագիրը կնքելու օրից մինչև 1880 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում: Նույն թվականի նոյեմբերի 5-ին եկեղեցու կառուցման խնդրով գյուղի հասարակությունը դիմում է Երևանի վիճակային կոնսիստորիային: Թույլտվությունը տրվում է 1880 թվականի մայիսի 9-ին: Այնուհետև եկեղեցին միևնույն՝ Սբ. Հովհաննես անվամբ հիշվում է հետագա տարիներին (օրինակ՝ 1909 թվական): Խորհրդային տարիներին եկեղեցու շենքը գործածվում էր որպես պահեստ: 2006 թվականից արդեն բավականաչափ քայքայված կառույցը վերանորոգվում է պոլսահայ բարերար Մկրտիչ Սերթշիմշեքի,

Պետրոս Շիրինօղլու, Կ.Պոլսի Բերայի Սբ. Երրորդություն եկեղեցու թաղային խորհրդի նախագահ Աբիգ Հայրապետյանի, Առինջի գյուղապետ Գ. Սարգսյանի, առինջեցի գործարար Գ. Ջանվելյանի և այլոց օժանդակությամբ: Վերաբացման առիթով օծումը կատարվում է 2007 թվականի հուլիսի 7-ին:



**Կարմրավոր**



Կարմրավոր եկեղեցին գտնվում է Առինջ գյուղի հյուսիս-արևմտյան եզրին գտնվող մի բարձրադիր բլրի հարավային արևահայաց լանջին: Առինջի մասին գրավոր աղբյուրները հիշատակում են խոշոր վանական համալիրներից մեկի՝ հայտնի հոգևոր ու կրթամշակութային կենտրոն Ձագավանքի վանական համալիրի պատմության այս կամ այն խնդիրների հետ կապված: Առինջ գյուղի անվան վաղագույն հիշատակությունը XIII դարից է: Համաձայն Կեչառիսի վանքի ժամատան հյուսիսային պատին 1206թ. փորագրված մի արձանագրության՝ ոմն Հայրաձայն Առինջից հող է գնել, այգի տնկել և նվիրել Կեչառիսի վանքին: Առինջ գյուղի անվան հիշատակությամբ նման երկու նվիրագրեր էլ պահպանվել են Սանահինի և Հայրավանքի 1211թ. վիմագրերում: Ավելի ուշ Առինջը քանիցս հիշատակվում է 1476թ., 1494թ., 1499թ., 1602թ. և այլ թվականների գրչագիր ձեռագրերի հիշատակարաններում:

Կարմրավոր եկեղեցին միանավ, թաղակապ կառույց է: Միակ մուտքն արևմտյան կողմից է: Նախքան պեղումները եկեղեցին կիսավեր վիճակում էր: Համեմատաբար լավ էին պահպանված կառույցի հարավային և արևելյան պատերը: Հարավային պատին, արտաքուստ քանդակված են երկու տասնյակ խաչաքանդակներ, որոնց մի մասն ունեն հիշատակագրեր: Եկեղեցու արևմտյան և հարավային կողմերում, պատվանդանների վրա կանգնած էին XVI-XVII դդ. մի քանի խաչքարեր: Տարիներ

առաջ եկեղեցու շուրջը տարածված է եղել ընդարձակ գերեզմանատունը, որի տապանաքարերի զգալի մասը գյուղի այս հատվածի ընդարձակվելու հետ կապված կամ տեղահան են արվել կամ էլ մնացել են մերձակա փողոցների ու առանձնատների տակ: 2014թ. նախատեսվեց վերականգնել Սբ. Կարմրավոր եկեղեցին, բարեկարգելուց ցանկապատել գերեզմանատունը: Մաքրվեցին բոլոր տապանաքարերն ու խաչքարերը, հայտնաբերվեցին նոր հուշակոթողներ, եկեղեցու շինաքարեր, քանդակազարդ մանրամասեր: Հուշակոթողների մի մասն ունեին հիշատակագրեր:

Ծառուկյան ընտանիքը ստանձնեց նաև գյուղի հյուսիսում գտնվող Կարմրավոր մատուռի ամբողջական վերականգնումը: Մատուռն Առինջի ամենահին հուշահամալիրներից է և թվագրվում է 13-րդ դարով: Այն կառուցված է տեղական բազմերանգ սրբատաշ տուֆից և շրջապատված է միջնադարյան արձանագիր խաչքարերով և տապանաքարերով: Ասում են՝ Կարմրավորը Առինջի անձնագիրն է, որն ուրույն նշանակությունն ունի համայնքի տարեգրության մեջ: Մինչև վերակառուցումը մատուռը գտնվում էր կիսաքանդ վիճակում և ամբողջությամբ թաղված էր քարերի ու մացառների մեջ: Ծառուկյան ընտանիքի շնորհիվ հաջողվեց ոչ միայն բարձրացնել Կարմրավորի խոնարհված գլուխն ու շունչ տալ նրա անկենդան քարերին, այլև փրկել հազարամյակների բովով անցած մատուռն ու փոխանցել սերունդներին՝ որպես հոգևոր ժառանգություն:





Առինջի Սբ. Մարիամ Աստվածածին



Առինջի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին գտնվում է Առինջ գյուղում: Այն առաջինն էր, որ շունչ առավ Ծառուկյան ընտանիքի բարերարությամբ: Եկեղեցին, որ կառուցվել է մոտ 15 տարի առաջ, իշխող դիրք ունի գյուղի նկատմամբ: Թվում է՝ Սուրբ Կույսը եկեղեցու բարձունքից զորավոր թևերի տակ է առել ամբողջ Առինջն ու իր վրա վերցրել համայնքի բնակիչների պաշտպանությունը: Ծառուկյան ընտանիքը կառույցի տեղն ու դիրքը հենց այնպես չի ընտրել: Եկեղեցու բարձրությունից տեսանելի է ամբողջ համայնքը, իսկ ամեն առավոտ հնչող զանգերի ղողանջը՝ լսելի Առինջի յուրաքանչյուր հատվածում:

Սուրբ Մարիամ Աստվածածինը հարազատ ծննդավայրում կառուցած առաջին եկեղեցին էր, բայց ոչ վերջինը: Դրա ավարտից անմիջապես հետո Ծառուկյան ընտանիքն իր վրա վերցրեց Առինջում գտնվող մեկ այլ՝ կրկին Սուրբ Մարիամ Աստվածածնի անունը կրող եկեղեցու վերակառուցումը, որը դարերի ընթացքում վերածվել էր ավերակների: Նրա տարեգրության մասին վկայող հստակ փաստեր չկան, քանի որ ոչ մի արձանագրություն պահպանված չէ: Սակայն ըստ եկեղեցու ճարտարապետ Սամվել Ստեփանյանի՝ կառույցի հորինվածքը թույլ է տալիս ենթադրել, որ այն 9-10-րդ դարերի շինություն է: Ճարտարապետը պատմում է, որ եկեղեցու փլատակների մաքրման ընթացքում հայտնաբերվել է առյուծի գլուխ

պատկերող քանդակ, որը հիշեցնում է Բագրատունիների՝ առյուծի տեսքով հնագույն զինանշանը: Այն թույլ է տալիս չբացառել, որ եկեղեցին կարող է կառուցված լինել հենց նրանց թագավորության օրոք:
Խոնարհված եկեղեցուն զուգահեռ Ծառուկյան ընտանիքը վերականգնում է նաև նրան շրջապատող ամրոցի պարիսպը, որի հետքերը տանում են դեպի ավելի վաղ շրջաններ:



| ՀՀ | Հուշարձանի անվանումը | Կադաստրային քարտեզի նշագրումը և մակերեսը | Պետական կամ համայնքային լինելու փաստը |
|---|---|---|---|
| 1 | Գերեզմանոց | Ծածկագիր 07-018-0110-0002 3.51 հա | Համայնքային |
| 2 | Մատուռ <<Կույս Վառվառա>> | Ծածկագիր 07-018-0110-0031 | Պետական |
| 3 | Գերեզմանոց | Ծածկագիր 07-018-0004-0001 0.08 հա | Պետական |
| 4 | Գերեզմանոց | Ծածկագիր 07-018-0007-0010 0.03 հա | Պետական |
| 5 | ՀուշարձանԵ.Ա.Ջ | Ծածկագիր 07-018-0020-0049 0.12 հա | Համայնքային |
| 6 | Հուշարձան Եղեռնի Զոհերին | Ծածկագիր 07-018-0020-0017 | Համայնքային |
| 7 | Մատուռ Սբ. Կարապետ | Ծածկագիր 07-018-0007-0007 0.001 հա | Համայնքային |
| 8 | Եկեղեցի | Ծածկագիր 07-018-0007-0012 0.02 հա | Պետական |
| 9 | Գերեզմանոց | Ծածկագիր 07-018-0114-0001 2.17 հա | Համայնքային |
| 10 | Մատուռ Սբ. Հովհաննես | Ծածկագիր 07-018-0005-0059 | Համայնքային |

**Բալահովիտ գյուղի պատմամշակույթային ժառանգություն ցանկ**



Բալահովիտ գյուղի «Հայրենական Մեծ Պատերազմի» հուշարձան

Կառուցման տարեթիվը՝ 1971թ.

Կառուցվել է համագյուղացիների հանգանակությունից, բազալտ:



Բալահովիտ գյուղի «Արցախյան 1-ին պատերազում զոհվածների» հուշարձան
Կառուցման տարեթիվը՝ 1993թ.
Կառուցվել է համագյուղացիների կողմից, սև տուֆ:





Բալահովիտ գյուղի «Արցախյան 1-ին պատերազմ զոհված Մխիթար Թումասյանի» հուշարձան
Կառուցման տարեթիվը՝ 1997թ.
Կառուցվել է եղբոր՝ Մյասնիկ Թումասյանի կողմից, բազալտ:



Բալահովիտ գյուղի «Սուրբ Վառվառա» մատուռ
Կառուցման տարեթիվը՝ 1999թ.
Կառուցվել է Բալահովիտ համայնքի պատվավոր քաղաքացի՝ Սամվել Գասպարյանի կողմից, կարմիր տուֆ:





Բալահովիտ գյուղի «1915թ-ի Հայոց Ցեղասպանության զոհերի» հուշարձան
Կառուցման տարեթիվը՝ 1975թ.
Կառուցվել է արտասահմանցի բարերարների կողմից, տուֆ քարից:



Բալահովիտ գյուղի «2020թ-ին 44-օրյա պատերազմում զոհվածների» խաչքար հուշարձան
Կառուցման տարեթիվը՝ 2021թ.
Կառուցվել է Բալահովիտի համայնքապետարանի կողմից, բազալտ:



Բալահովիտ գյուղի «Սուրբ Կարապետ» մատուռ
Կառուցման տարեթիվը՝ անհայտ, տուֆ քարից:



Բալահովիտ գյուղի «Սուրբ Հովհաննես» մատուռ
Կառուցման տարեթիվը՝ անհայտ, տուֆ քարից:



Բալահովիտ գյուղի «Սուրբ Աստվածածին» եկեղեցի
Կառուցման տարեթիվը՝ անհայտ, տուֆ քարից:

Սուրբ Թաթոս-Առաքելի եկեղեցի



Գեղաշենում է գտնվում 1863թ.-ի Սուրբ Թաթոս-Առաքելի եկեղեցին և մատուռ՝ Կապույտխաչ խաչքարով (X դար): 3 կմ հարավ՝ Սուրբ Սարգիս մատուռը (XVII դ.): Գեղաշենի կենտրոնում գտնվող 12-19դդ. հանրապետական նշանակության գերեզմանոցում պահպանվում է Ք.ա. 3-2 հզ Վիշապաքարը:





Գեղաշենի Սբ. Գևորգ եկեղեցին 1870թ.-ի կառույց է և տեղական նշանակության հուշարձան:



Կապույտ խաչ մատուռը գտնվում է Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Գեղաշեն գյուղում:
Կառուցվել է 1863թ.-ին, ծովի մակերևույթից բարձր է 1600մ :





Գեղաշեն գյուղի Սուրբ Սարգիս մատուռը կառուցվել է  XVII դարում:



Գեղաշենի կենտրոնում գտնվող 12-19դդ. հանրապետական նշանակության գերեզմանոցում պահպանվում է Ք.ա. 3-2հզ Վիշապաքարը:



Խաչքարը տեղադրվել է Գետարգել գյուղում 1997թ.-ին Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին



Խաչքարը տեղադրվել է Գետարգել գյուղում քրիստոնեության 1700-ամյակի առթիվ 2001թ.-ին



Հուշաղբյուրը կառուցվել է Գետարգել գյուղում 2002թ.-ին զոհված ազատամարտիկների և զինվորների հիշատակին



**Մայակովսկի գյուղի երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշաղբյուր**

Հուշաղբյուրը գտնվում է Մայակովսկի գյուղում, կառուցվել է 1963թ.-ին՝ ի հիշատակ պատերազմում զոհված համագյուղացիների: Կամարակապ բացվածքներով և հարթ ծածկով կառույց է: Կամարները հանգչում են խոյակներով ավարտվող վեցանիստ սյուների վրա: Մարմարե հուշասալից ներքև զետեղված է ջրի ծորակ: Հուշաղբյուրի ստորին շարքերը կառուցված են սրբատաշ բազալտից: Հուշարձանի հետագա պահպանության նպատակով սահմանված գոտին զբաղեցնում է 0.0015 հա հողատարածք:

## Սբ. Հովհաննես եկեղեցի





Մայակովսկի գյուղի արևելյան եզրին կա մի այլ եկեղեցու շենք, դա հին գյուղի եկեղեցին է, այդ եկեղեցին 19-րդ դարի գործ է, շարված է տուֆի անմշակ փոքր կտորներից, տանիքը փայտածածկ է եղել, խաչքարի մի բեկոր էլ ագուցված է եկեղեցու ներսում՝ մկրտարանի խորշի մեջ: 2017 թվականին Մայակովսկի գյուղի բնակիչներ Ստեփան և Սարգիս Մկրտչյանների միջոցներով Սբ. Հովհաննես եկեղեցին հիմնովին վերանորոգվել է: Իր հնությամբ երկրորդ գերեզմանոցը գտնվում է գյուղի արևելյան եզրին՝ նախկին ծխական, ներկայիս գերեզմանատան Սբ. Հովհաննես եկեղեցու շուրջ: Եկեղեցին գտնվում է Մայակովսկի գյուղի 7-րդ փողոց 3/1 հասցեում:





**Մայակովսկի գյուղի Սբ. Գևորգ եկեղեցի**



1947թ. իրականացված ուսումնասիրական աշխատանքների ժամանակ եկեղեցին դարձյալ վկայվել է Սբ. Աստվածածին անվամբ: Ամենայն հավանականությամբ եկեղեցին հիմնավերակառուցվել է 1910-ական թթ. սկզբներին: Եկեղեցին ունի իր ժամանակաշրջանին հատուկ և լայն տարածում գտած եռանավ բազիլիկ հորինվածք, կիսաշրջանաձև խորան, ուղղանկյուն հատակագծով զույգ ավանդատներ, արևմտյան և հարավային ճակատներից զույգ մուտքեր: Արտաքուստ երեսպատված է սրբատաշ տուֆով: Եկեղեցին 2018թ. հիմնովին վերանորոգվել է համայնքի պատվավոր քաղաքացի, բնակիչ Ռոստովաբնակ Արմեն Հակոբյանի սեփական միջոցներով: Եկեղեցին գտնվում է Մայակովսկի գյուղի 3-րդ փողոց 1 փակ. 14 հասցեում:



**Հայրենական պատերազմի մասնակիցների հուշարձանը Մայակովսկի գյուղում**



**Սրբատեղի «Կապուտ խաչ»**

Մայակովսկի գյուղի գերեզմանոցի հյուսիսային եզրին՝ բլրի արևմտյան ստորոտին է գտնվում իր նախնական տեղում և ամբողջական տեսքով պահպանված մի խաչքար, որին ավանդաբար վերագրվել է բուժիչ հատկություններ:



**ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐԻ ՔԱՐԱՅՐ- ԱՂԲՅՈՒՐ XIII-XIV ԴԴ.**

Հանրապետական նշանակության հուշարձանը գտնվում է Կաթնաղբյուր գյուղի արևելյան եզրին: Այն թվագրվում է XIII-XIV դդ.: Պահպանական գոտին զբաղեցնում է 0,26 հեկտար հողատարածք, ծովի մակերևույթից գտնվում է շուրջ 1450 մետր բարձրության վրա:

Հուշարձանն իրենից ներկայացնում է բնական քարանձավ՝ 7 x 3 x 2,5 մետր չափսերով: Ներսից բխում է սառնորակ աղբյուր, որը հնուց ի վեր հայտնի է եղել «Կաթնաղբյուր» անվամբ, որից և բնակավայրը ստացել է իր անվանումը: Քարանձավն ունի աշխարհագրական զուգահեռականին մոտ (արևելքից-արևմուտք ձգվող) ուղղվածություն և առաջացել է բազալտակրաքարային ժայռագոյացության մեջ: Մուտքն ունի աղեղնաձև բացվածք: Հուշարձանը, թե նախկինում և թե մեր ժամանակներում, սրբատեղի է համարվել, իսկ ներսից բխող սառնորակ ջրին տեղացիները հրաշագործ հատկություններ են վերագրել՝ հատկապես կերակրող մայրերի համար: Կան ենթադրություններ և գիտական վարկածներ այն մասին, որ հուշարձանը ոչ միայն միջնադարում, այլ նաև դրանից դեռ շատ առաջ տեղաբնիկների համար ծիսապաշտամունքային վայր է եղել: Դա են վկայում 1980-ական թթ. սկզբներին տարածքից հայտնաբերված վանակատե /օբսիդիան/ քարե գործիքները:






**Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցի**

Կաթնաղբյուրի Սբ.Աստվածածնի անվամբ օծտված ծխական եկեղեցին քարաշեն կառույց է (արտաքին չափերն են՝ 12.76*7.71), որ թերևս հիմնվել է ավելի հին եկեղեցու տեղում: 1963 թվականին փլուզվել է և շարունակաբար ենթարկվում է բնության քայքայիչ ներգործությանը: Թվում է, թե ծածկված է եղել փայտամածով: Ունի ուղղանկյուն հատակագիծ, արևելքում կիսաշրջան խորան: Միակ մուտքը բացվածքն է արևմտյան ճակատից: Խորանում որպես սեղանի մեծ քար է ծառայում գլխիվայր կանգնեցված մի խաչքար: Եկեղեցու կառուցման ժամանակ սոսկ իբրև շինություն ագուցվել են մի քանի խաչքարեր ևս:

## Ծիրանավոր Սուրբ Նշան եկեղեցի



Ծիրանավոր Սուրբ Նշան եկեղեցին գտնվում է Արամուս գյուղում: Եկեղեցին կենտրոնագմբեթ տաճար է, որը կառուցվել է 6-րդ դարի 90-ական թվականներին: Ա.Բ. Երեմյանի կարծիքով եկեղեցին պետք է կառուցված լինի Ավանի Ծիրանավոր եկեղեցու նախորդող շրջանում, երբ այնտեղ քահանա էր Ջոջիկը: Դվինին հակաթոռ կաթողիկոս Հովհան Բագարացին նախքան Ավանի կաթողիկոսական եկեղեցու կառուցման ավարտը, պետք է որ տեղավորված ու գործելիս լիներ Արամուսի Ծիրանավոր եկեղեցում:

Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին նվիրված խաչքարն Արամուս գյուղում:



**Սուրբ Հակոբ եկեղեցի**



Արամուսի գլխավոր սրբատեղիներից է նաև գյուղի կենտրոնում գտնվող Սուրբ Հակոբ եկեղեցին: Եկեղեցու մուտքի վերևում գտնվող արձանագրության մեջ նշված է, որ եկեղեցին կառուցվել է 1867 թ., սակայն թե գյուղացիների և թե հուշարձանագետ Սամվել Կարապետյանի ենթադրությամբ, դա կարող է լինել վերակառուցման տարեթիվը: Եկեղեցու պատերի քարերից մի քանիսը բավականին հին են, (զարդաքանդակներ, խաչքարեր), որոնք, ինչպես Սուրբ Աստվածածին մատուռի դեպքում, շատ անփույթ կերպով էին օգտագործված: Նույնիսկ եկեղեցու հարևան տան պատերի մեջ կային պատկերաքանդակներով քարեր, որոնք, ենթադրաբար, նույնպես եկեղեցուն են պատկանում (թե եկեղեցու և թե տան պատկերաքանդակները նույն ձեռագիրն ունեին):

**Պտղնավանք**



Վաղ միջնադարյան հայկական ճարտարապետական այս հուշարձանը գտնվում է Պտղնի գյուղում, հնագիտական ընդարձակ տարածքի կենտրոնում: Կառուցել է իշխան Մանուել Ամատունին VI դ. վերջին – VII դ. սկզբին: Ունի երկու զույգ մույթերով գմբեթավոր դահլիճի հորինվածք: Կիսավեր տաճարից պահպանվել են հյուսիսային պատը, հարավային պատի արևելյան մասը և արևելյան գմբեթակիր կամարը: Տաճարը լուսավորվել է մեծ թվով լայն լուսամուտներով: Պտղնավանքի պատկերաքանդակները վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության արժեքավոր և ինքնատիպ ստեղծագործություններից են: Տաճարի սրբատաշ քարերի վրա պահպանվել են վարպետների բազմաթիվ նշաններ:

Պտղնի գյուղի տարածքում է գտնվում նաև կիսավեր "Թուխ Մանուկ" մատուռը (XVII դար), Կաթողիկե եկեղեցին (VI-VII դարեր): Գյուղի տարածքում նշմարվում են մ.թ.ա. II-I հազարամյակի կիկլոպյան ամրոցի մնացորդներ:

**Աբովյան համայնքի Վերին Պտղնի գյուղը** գտնվում է մարզկենտրոնից 35 կմ հարավ-արևմուտք, Սևանի խճուղու վրա: Գյուղը հիմնադրվել է 1944 թ.-ին, Վերին Պտղնի է վերանվանվել 1991թ.-ի ապրիլի 3-ին:
Վերին Պտղնի գյուղում պատմամշակութային հուշարձաններ առկա չեն:

**Սուրբ Հովհաննես եկեղեցի**



Կամարիսում է գտնվում Սբ. Հովհաննես եկեղեցին, որը կառուցվել է 1832 թվականին:

Կամարիսում է գտնվում նաև 17-րդ դարի Սբ. Հակոբ եկեղեցին, հարավային մասում՝ 1258 թվականին կառուցված Սբ. Աստվածածին մատուռը և մ.թ.ա. 1-ին հազարամյակի կիկլոպյան ամրոցը: Գյուղի նոր գերեզմանոցում է գտնվում 15-17-րդ դարերի «Կիրակնամուտ» մատուռը:

Գյուղից հարավ գտնվում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի բերդշեն, որը զբաղեցնում է մոտ 8 հա տարածք և բնակելի է եղել մինչև ուշ միջնադար: 1938 թվականին, շինարարական աշխատանքների ժամանակ բացված երկխուց դամբարանում հայտնաբերվել է քարե դագաղ: 1970-1971 թվականների պեղումների ընթացքում գտնվել են փայլեցված սև խեցեղենի նմուշներ, սենյակներից մեկում՝ 6 թոնիր: Ամրոցից մոտ 2 կմ հարավ-արևմուտք դամբարանադաշտն է: Գյուղի 18-19-րդ դարերի եռանավ բազիլիկ եկեղեցու (այժմ ավերակ) ներսում պահպանվել են որմնանկարներ, արտաքին պատերին՝ երկու արձանագրություն, որոնցից մեկը վերաբերում է Ակոռի գյուղի կործանմանը (1840):

## IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աբովյան քաղաքն ունի 256 բնակելի շենք: Աբովյանի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 750 000 քառակուսի մետր:

Աբովյան քաղաքի տարածքային զարգացումն անընդմեջ շարունակվող գործընթաց է: Այն պետք է կատարվի քաղաքաշինական գոտևորման ու տարածքային պլանավորման հաջորդական փուլերով՝ նախագծում, շինարարություն, նոր թաղամասերի շահագործում,
հին ֆոնդերի արդիականացում և վերակառուցում:

Քաղաքի հասարակական կենտրոնի համար նախատեսված տարածքում մի քանի հասարակական շենքերի կառուցումից հետո (քաղաքապետարան, հանրախանութ, մշակույթի պալատ, թանգարան, հյուրանոց, ավտոկայան և այլ) հիմք դրվեց քաղաքի կենտրոնի կազմավորման համար: Առաջին միկրոշրջանում կառուցած կինոթատրոնի շուրջ գոյացավ և բնակչության կողմից ընդունվեց ինքնաբուխ կենտրոնը, որն իր ճանաչումն է պահպանում մինչ այսօր: Այն գտնվում է մեծ աղեղնաձև մայրուղու և բնակելի փողոցներից մեկի խաչմերուկում, քաղաքի ներկայիս ամենաբանուկ հանգույցում: Շուկայական հարաբերությունների անցման տարիներին այստեղ վերջին 10-15 տարիների ընթացքում առաջացան առևտրի ու կենցաղային սպասարկման մասնավոր օբյեկտների, հասարակական տրանսպորտի կանգառների ու կայանատեղերի հանգույցներ:

Քաղաքի հասարակական համակարգի վերակազմավորումը, կենտրոնական հատվածի կառուցապատման ակտիվացումը, սպասարկման առաջնային օբյեկտների կահավորումը, ավտոկայանատեղերի ապահովումը, բարեկարգումը կարող է թարմ շունչ հաղորդել ներքին քաղաքաշինական իրավիճակին, խթանել տարաբնակեցման համակարգում համայնքի դերի ու տնտեսական զարգացմանը: Քաղաքի տարածքում գործում են հիվանդանոցը, ծննդատունը, պոլիկլինիկան, հանրապետական կլինիկական տուբերկուլյոզային հիվանդանոցը, դպրոցներ, մանկապարտեզներ, մասնավոր ԲՈՒՀ, «Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանը», քաղաքային մարզադաշտը, արդյունաբերական, շինարարական, տրանսպորտային, գյուղատնտեսական ձեռնարկություններ, կապի և բանկային բաժանմունքները, սրճարանները, ճաշարաններն ու ռեստորանները, շուկաները:

Աբովյանի հասարակական կենտրոնում 70-80 թթ. ընթացքում կառուցվեցին մի շարք հասարակական, յուրահատուկ ճարտարապետական լուծումներ ունեցող շենքեր, որոնք իրենց տեղը պետք է զբաղեցնեն 20-րդ դարի հայկական ճարտարապետության պատմության էջերում: Դրանցից պետք է հիշատակվեն՝ քաղաքապետարանի, մշակույթի պալատի, թանգարանի, պիոներական պալատի /ճարտարապետ՝ Լ. Չերքեզյան/, «Սիփան» հյուրանոցի /ճարտարապետ՝ Կ. Ալեքսանյան/, ավտոկայանի /ճարտարապետ՝ Ա. Մկրտչյան/ շենքերը:

*Աբովյանի քաղաքապետարան*



*Մշակույթի պալատ*





*Թանգարան*



*«Սիփան» հյուրանոց*



Կապի հանգույցի շենք



Վարչական շենք



Աբովյանի երկաթգծի կայարանի շենք



Աբովյանի ավտոկայարան



Աբովյանի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի





Աբովյանի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հիմնակեքը կատարվել է 2006 թվականի օգոստոսի 24-ին: Օծման արարողությունը տեղի է ունեցել 2013 թվականի մայիսի 14-ին: Եկեղեցին կառուցվել է գործարար Գագիկ Ծառուկյանի բարերարությամբ:

Եկեղեցու հեղինակը ՀՀ վաստակավոր ճարտարապետ Արտակ Ղուլյանն է:

## V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

Աբովյան քաղաքը բնակեցման համար ավելի բարենպաստ պայմաններ ունի, քան Արարատյան հարթավայրի, Հրազդանի սարահարթի կամ Սևանի ավազանի համայնքները՝ բնակլիմայական, քաղաքաշինական, ինժեներական ենթակառուցվածքների հագեցվածությամբ, տարածքային ռեսուրսների առկայությամբ, ինչպես նաև բարենպաստ սեյսմիկ պայմաններով:

Աբովյան քաղաքում Խորհրդային ժամանակներից արդեն ձևավորվել է որոշակի ճարտարպետական ոճ: Քաղաքի հիմնական կերպարը ձևավորում են 5-16 հարկանի բնակելի շենքերը և մոդեռնիստական ոճով, պարզ, լակոնիկ ճարտարապետությամբ հասարակական շենքերը՝ հիմնականում հասարակական կենտրոնում:

Նույն ճարտարապետական ոճը խրախուսվում է պահպանել նաև ժամանակակից ճարտարապետության մեջ: Ի տարբերություն հանրապետության այլ քաղաքների, որտեղ կան քարի ճարտարապետության հին դրսևորումներ, Աբովյանը զուրկ է դրանից:

Նոր Աբովյանը պատկերացվում է կանաչ այգեպուրակներով, լայն ճանապարհներով, պարզ, լակոնիկ ճարտարապետությամբ, մեծ ապակեպատ

մակերեսներով շինություններով, ակտիվ գովազդներով, ժամանակակից նյութերի կիրառմամբ փողոցներով քաղաք:

Նոր կառույցները հիմնականում կարկասային շենքեր են՝ երեսպատված քարի կամ ալիգաբոնդերի տեսականիով, հնարավորինս մեծ բացվածքներով:

Նկատի ունենալով Աբովյանում սեզոնային ուժեղ քամիները, հիմնականում օգտագործվում են ծառատունկ և կանաչ ծածկույթներ, խուսափելով տենտերի և մարկիզների կիրառումից:

Շինությունների արտաքին պատերի համար քաղաքում նախընտրելի երանգներն են սպիտակ, մոխրագույն, ծիրանագույն երանգները, կապտականաչ հայելային ապակիները, իսկ տանիքների համար՝ շագանակագույն և մուգ կապտականաչ երանգները:

Ելնելով քաղաքաշինական միջավայրից, հարակից շենքերի ճարտարապետական ձևերից՝ կիրառվում են արհեստական երեսպատման նյութեր՝ երանգավորումը համապատասխանեցնելով միջավայրին: Արտաքին լուսավորություն իրականացվում է միայն հասարակական, մշակութային և վարչական շենքերի ճակատներում և շրջակայքում: Հատուկ դեպքերում նաև բնակելի շենքերում, բնակիչների համաձայնությամբ և պահպանելով լուսավորության նորմաները:

Համայնքի ղեկավարի կողմից հաստատված ճարտարապետական առաջարկներով նախագծերի համաձայն՝ քաղաքի գլխավոր փողոցների վրա կառուցված առևտրային, հասարակական նշանակության շինությունների սեփականատերերին առաջարկվում է այդ կառույցների տարբերայնորեն ձևավորված բազմազան ճակատները քողարկել ընդհանրացնող, մոդուլացված և էսթետիկական պահանջներին բավարարող լուծումներով:



